

Սմբատ Խ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՆՆԱԼՆԵՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՊՐՈՅԸ

Լյուսիեն Ֆերի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը*

1. Աննալների դպրոցի կերպավորության շրջափուլերը

1929 թվականին Ստրասբուրգում հիմնված «Տարեգրություններ տնտեսական և ընկերային պատմության» («Annales d'histoire économique et sociale») հանդեսի առաջին իսկ համարի հրատարակմամբ **Լյուսիեն Ֆերը** և **Մարկ Բլոկը** տոն տվեցին պատմագիտական նոր ըմբռնումների ձևավորմանը¹:

Նրանց հիմնած Աննալների պատմագիտական դպրոցը «վճռորշ նշանակություն ունեցավ ոչ միայն ֆրանսիական»², այլև ընդհանրապես՝ համաշխարհային պատմագիտական մտքի զարգացման մեջ, քանզի նրա ստեղծումը համեմատվում է անգամ «կուլտեռնիկյան հեղափոխության» հետ³: Աննալականներն իրենք, Լ. Ֆերից ու Մ. Բլոկից սկսած, մերժում էին «դպրոց» եզրը⁴, պնդելով, որ իրենք հատկապես դեմ են նման «խմբային ոգուն»⁵: Ըստ նրանց՝ Աննալները «... մարդկանց ազատ միավորում է: Նրանք մտահոգված են պատմության արարչագործմամբ, որը դարձել է հասարակական գիտությունների կենտրոնը, սիրտը, բոլոր գիտությունների առանցքը, հասարակությունը հետազոտելով գանազան՝ ընկերային, հոգեբանական, բարոյական, կրոնական և գեղագիտական, ի վերջո նաև քաղաքական, տնտեսական և մշակութային դիտանկյուններից»⁶:

Փիքըր Բըրըրը նույնպես «դպրոց» եզրը համարում է սահմանափակ, քանզի այն անտեսում է խմբի անդամների անհատական տարբերությունները, ինչպես նաև զարգացումները՝ ժամանակի երկար տևողության ընթացքում: Ուստի նա գերադասում էր կիրարկել «շարժում» հասկացությունը⁷: Այդ պատճառով «դպրոց» հասկացությունը մենք գործածում ենք հարացույցային իմաստով և աննալականներին պայմանականորեն բաժանում երեք սերնդի. առաջին սե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 6. 05. 2011:

1 Տե՛ս **Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան**, Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., N1-2, (2005), էջ 33:

2 Տե՛ս **F. Braudel**, *Ecrits sur l'Histoire*, Paris, 1969, p. 32.

3 Տե՛ս **P. Burke**, *op.cit.*, p. 2.

4 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ж. Ле Гофф**, *Существовала ли французская историческая школа «Анналов»? // Французский ежегодник, 1968, М., 1970.*

5 *Annales d'histoire économique et sociale*, 1937, p. 15.

6 **L. Febvre**, *Pro parva nostra domo: scolies sur deux articles belges*, *Annales: ESC*, N 3, (1953), p. 512.

7 Տե՛ս **P. Burke**, *op.cit.*, p. 2.

Գ. (Թ) Կարի, թիվ 2 (34) ամսիկ-հունիս, 2011

ՎԵՄ համահայկական համոթն

րունդ՝ 1929-1956 թթ., երկրորդ՝ 1956-1969 թթ, երրորդ՝ 1969-1994 թթ.: Ինչ վերաբերում է չորրորդ սերնդին, ապա նրա գոյությունը խնդրարկելի է:

Հրատարակության ընթացքում Լ.Ֆերիի և Մ.Բլոկի հանդեսն ունեցել է մի քանի անվանումներ: Սկզբնապես՝ «**Տարեգրություններ տնտեսական և ընկերային պատմության**» («*Annales d'histoire économique et sociale*») անվամբ 1929-1938 թթ. լույս է տեսել Ստրասբուրգում: Իսկ նրա փարիզյան հրատարակությունը հայտնի է «**Տարեգրություններ ընկերային պատմության**» («*Annales d'histoire sociale*») անվամբ (1941 թ.): Ֆաշիստական տիրապետության տարիներին հրատարակվել է ժողովածուների տեսքով՝ «**Ընկերային պատմության ժողովածու**» («*Mélanges d'histoire sociale*») անվամբ (1942-1944 թթ.):

Դիմադրության շարժմանը մասնակցած և գերմանական գավթիչների կողմից գնդակահարված Մարկ Բլոկի հիշատակին նվիրված երկու հատորները հայտնի են «**Տարեգրություններ ընկերային պատմության**» («*Annales d'histoire sociale*») անվամբ (1945 թ.): Այնուհետև՝ «**Տարեգրություններ. տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ**» («*Annales: Économiques. Sociétés. Civilisations*») անվամբ (1946-1994 թթ.): Իսկ արդեն 1994 թվականից՝ «**Տարեգրություններ. պատմություն և ընկերային գիտություններ**» («*Annales: Histoire et sciences sociales*»):

Մինչ Աննալները (Տարեգրությունները) պատմագիտության մեջ գերակայող էր քաղաքական և իրադարձութենական շարադրանքը՝ մշակված դրապաշտական (պոզիտիվիստական) իմաստասիրության ծիրում: Այն մեկնարկում էր փաստերի և դրանց աղբյուրների սուկական բացահայտման նպատակից⁸: Ուստի պատահական չէր, որ պատմագիտական մտքի ճգնաժամը աննալականները ներկայացնում էին իբրև դրապաշտության գերակայության հետևանք⁹:

Հանդեսի առաջին տարիների հրապարակումներն, ըստ էության, ռիսկային քայլեր էին: Նրա նորամուծությունները անտեսվում էին ու մնում աննկատ¹⁰: Ու չնայած ակադեմիական վերնախավի անբարեհաճ վերաբերմունքին, հիմնադիրները հանդեսի շուրջ կարողացան ստեղծել համախոհների սովոր մի խումբ, որի ջանքերով հնարավոր եղավ հաղթահարել հնացած կարծրակերպերը: Ուստի նրանց ավանդը իրավամբ գնահատվում է որպես պատմագիտական մտքի հեղափոխում¹¹:

Աննալականներն առաջնորդվում էին պատմագիտության փոխակերպման գաղափարով: Եվ դա ապահովելու համար, ինչպես նկատում էր Լ. Ֆերը, անհրաժեշտություն դարձավ բազմակողմանի և ուշագրավ մտքերի առկայությունը, ինչպես նաև նոր ձևով «մտածելու կարողությունը»¹²: Ըստ այդմ՝ հանդեսի յուրաքանչյուր համարում հրապարակվում էր երկու-երեք հիմնարար հոդված: Գրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը նվիրված էր նեո, մասնակի, իսկ երկրորդը՝ առավել ընդգրկուն հիմնախնդիրների: Ելակետն այն էր, որ պատմագիտական խնդիրներն այլևս անհնար է լուծել մեկուսի: Ուստի՝ Լ. Ֆերն ու Մ. Բլոկը առաջադրում էին պատմագետների **արհեստախմբի** ձևավոր-

8 Տե՛ս Բ. Ժ. Կոլլինգվուդ, *Идея истории. Автобиография*, М., 1980, с. 122.

9 Там же, с. 129.

10 Տե՛ս Ժ. Քեվել, *История и социальные науки во Франции: На примере эволюции школы «Анналов»* // «Новая и новейшая история», N 5, (1998), с. 85.

11 Տե՛ս **La nouvelle histoire**. // Sous la direction de J. Le Goff et R. Chartier, J. Revel. – CEPL, Paris, 1978, (Les encyclopedies u savoir moderne), p. 344.

12 **L. Febvre**, *Combats pour l'histoire. Bibliographie choisée et méthodique*, Paris, 1953, p. 33.

ման գաղափարը: Դրա վառ օրինակը դարձավ նրանց անձնական համագործակցությունը:

Ընդամին, երկուսի համար էլ պատմության նոր ընկալման մեկնակետը «քաղաքակրթություն» հղացքն էր: Լ. Ֆերիի համար քաղաքակրթությունը **տոտալ** (total) և **գլոբալ** (globale) պատմությունն էր ընդգրկում, մինչդեռ Մ. Բլոկի համար դա **մտակեցվածքների** (mentalités) ամբողջությունն էր¹³: Այս մոտեցումներն իրենց մասնակի և ընդհանրական ընդգրկմամբ միաված էին միմյանց փոխլրացնելուն, փոխհարստացնելուն և կազմում էին **կենդանի պատմության** (histoire vivante) բովանդակությունը¹⁴:

Լ. Ֆերը և Մ. Բլոկը ձգտում էին հաղթահարել հասարակական գիտությունների, մեծիմասամբ՝ դյուրկհայմյան ընկերաբանության (սոցիոլոգիայի) և նորարական փնտրողներից հետ մնացած դրապաշտական պատմագիտության միջև ի հայտ եկած խզումը: Չնայած որ, ինչպես նկատում է Փ. Բրոքը, աննալականները մշտապես հակադրվել են «գերմանական գիտական ավանդույթի մեջ արմատավորված ծայրահեղ ագրեսիվ դրապաշտությանը»¹⁵, այնուամենայնիվ, անգամ նրանց «ամենակարկառուն ներկայացուցիչներին այդպես էլ չհաջողվեց ամբողջովին ձերբագատվել դրապաշտությանը ներհատուկ ինչ-ինչ սահմանափակություններից»¹⁶: Այսու՝ Լ. Ֆերը և Մ. Բլոկը առաջնորդվում էին «պատմությունը խնդիր է» (**histoire-problème**) սկզբունքով¹⁷ և, միաժամանակ, կրկին պատմության հիմնախնդիր դարձնում մարդուն¹⁸: Աննալականները առաջնային կարևորություն էին տալիս պատմագետի ստեղծագործական ակտիվությանը: Ըստ նրանց՝ պատմության ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, քան **արդիականության և անցյալի երկխոսություն**: Ընդ որում՝ արդիականությունը չպետք է «իր տակ ճզմի» անցյալը¹⁹: Անցյալի իրադարձությունների վերաբերյալ պատմություն-պատմվածքից և «փաստեր կուտակելուց» պետք է անցում կատարվի «պատմությունը խնդիր է» հարցադրմանը:

Աննալականներին ներհատուկ էր նաև հետաքրքրությունն ընկերային կյան-

13 Տե՛ս Ա. Я. Гуревич, Уроки Люсьена Февра, в книге: Л. Февр, Бои за историю, М., 1991, с. 511.

14 Ֆերի և Բլոկի պատմասիրական հայացքների մանրամասն քննարկմանը կանդիդատական ատենախոսություն:

15 P. Burke, op. cit., p. 21.

16 Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, անդ, էջ 34:

17 Տե՛ս Լ. Febvre, La France physique : question de méthode, // Mélanges d'histoire sociale, N 3, (1943), p. 93.

18 Մարդու հիմնախնդիր վերաբերյալ հետաքրքրությունը կրում էր հումանիտար մարդաբանության կնիքը, ուր մարդը դիտվում էր որպես «միկրոտիեզերք», բնական գործընթացների անկապտելի մասնիկ, որն, անշուշտ, Անրի Բեռի մարդաբանության տեսության զարգացումն էր:

19 «Երկխոսություն» հղացքի մասին ժամանակին ուշագրավ դիտարկում է արել Յոհան Գոտֆրիդ Չերդերը (1744-1803), գրելով. «Իմ գլխում չի կարող հղանալ «առաջին» միտքը կամ «առաջին» դատողությունը, եթե իմ հոգին չձգտի այն երկխոսայնացնել. այնպես որ մարդու «առաջին» միտքն ըստ էության արդեն նախապատրաստված է այն բանին, որ ընդունակ լինի երկխոսության մեջ մտնելու ուրիշ մարդկանց հետ», տե՛ս Wilhelm von Humboldt, Ueber die Verschiedenheit des menschlichen Sprachbaues und ihren Einfluss auf die geistige Entwicklung des Menschengeschlechts [1836], Darmstadt: Claassen & Roether, 1949, p. 418.

Իսկ պատմական ճանաչողությունը որպես «մշակույթների երկխոսություն» հղացքն իր դրսևորումն է գտնում Մ. Մ. Բախտինի (1895-1975) տեքստերում. «Մենք օտար մշակույթին առաջադրում ենք նոր հարցեր, որպիսիք նա ինքն իրեն չի առաջադրել, մենք նրանում մեր այդ հարցերին պատասխաններ ենք փնտրում, և օտար մշակույթը պատասխանում է մեզ՝ բացելով մեր առջև իր նոր կողմերը, նոր իմաստային խորությունները: Առանց սեփական հարցերի անհնարին է ստեղծագործաբար ոչինչ հասկանալ ուրիշից ու օտարից (բայց, անշուշտ, լուրջ, իսկական հարցեր): Երկու մշակույթների այդպիսի երկխոսային հանդիպման դեպքում նրանք չեն միաձուլվի և չեն միախառնվի. յուրաքանչյուրը կպահպանի իր միասնականությունը և բաց ամբողջականությունը, բայց նրանք կփոխհարստացնեն [միմյանց]»: Տե՛ս Մ. М. Бахтин, Эстетика словесного творчества, М., 1979, с. 335.

քի պատմության նկատմամբ՝ բառի ընդարձակ իմաստով: Սկզբնական շրջանում նրանք պատմագիտության ոլորտն ընդլայնեցին հիմնականում տնտեսական և ընկերային հիմնախնդիրների ներբերմամբ: Հանդեսում տեղ գտան հողվածներ, որոնցում քննարկվում էին տեխնոլոգիաների զարգացումը, ապրանքափոխանակությունը, գները, տնտեսական ճգնաժամերը, հասարակության ընկերային կառույցները, ուրբանիզացիան, մշակույթի պատմությունը և այլն²⁰: Նման ձգտումը կարմիր թելի պես անցնում էր հանդեսի հրատարակության ամբողջ ընթացքում²¹: Ընդ որում՝ փոխակերպությունների էին ենթարկվում նաև մարդու և հանրույթի մասին այլ գիտությունների հետ ունեցած պատմագիտության փոխհարաբերությունները: Չնայած այդ ամենին՝ միջկրթանքային (interdisciplinaire) հետազոտությունների նկատմամբ նրանց հակումը մնաց անփոփոխ:

Մարկ Բլոկից հետո²² Լ. Ֆեբրը շարունակեց հանդեսի հրատարակությունը: Ըստ նրա՝ աշխարհում տեղի ունեցած տարաբնույթ խոշոր տեղաշարժերը՝ ֆիզիկայի զարգացումը, հեղափոխական վերափոխություններն արվեստում, աշխարհի քարտեզի վերաձևումը, ինքնիշխանությունից գուրկ ազգերի ինքնագիտակցության արթնացումը և այլն, սասանել էին նաև պատմագիտության առկա հարացույցների արժանահավատությունը²³: Հետպատերազմյան տարիներին աննալականների հետազոտական փնտրտույթը միտված էր պատմագիտության նոր սահմանների և արժեքների հաստատման գործին: Այն արտահայտվեց նաև հանդեսի նոր անվանման մեջ՝ «**Տարեգրություններ, տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ**» («Annales: Économiques, Sociétés, Civilisations»):

Ուշագրավ է, որ հանդեսի 1946 թվականի հրատարակությունից սկսած՝ նրա կազմի վրա հայտնվում է Հերմես աստծո պատկերը: Անշուշտ՝ ոչ պատահականորեն: Այս աստվածությունը հունական դիցաբանության մեջ համարվում էր աստվածների բանբերը, երկնքի, երկրի և անդրաշխարհի կապող օղակը: Հերմեսը Ջեսի բանբերն էր և Տիեզերքի միավորիչը: Նրան էին վերագրվում **տեխնիկ** այլևայլ դրսևորումներ՝ առևտուր, ծովագնացություն, դրամափոխություն: Ինչպես նաև՝ մտքի ճարտարություն: Հին հունական դիցաբանության մեջ Հերմեսը զուգակցվում էր Հեստիա աստվածուհուն, որն, ի տարբերություն նրա, մարմնավորում էր տունը, փակ տարածությունը, անշարժությունը, մնայունությունը: Երկու աստվածությունների հակադրությամբ Լ. Ֆեբրն ընդգծում էր հանդեսի հիմնարար չափույթները՝ փոփոխությունն ու հաստատունությունը, իրադարձություններն ու կառույցները²⁴:

1949 թվականին աննալականներին հաջողվում է հիմնել «Բարձրագույն կրթության գործնական դպրոցի վեցերորդ բաժանմունքը» (VI^e section de l'École pratique des hautes études): Նրանում ներառվում էին հասարակական գիտությունների բոլոր ուղղությունները, բոլոր գիտությունները, որոնք սովորական ֆակուլտետներում բավարար զարգացման հնարավորություն չունեին: Ընդլայնվեցին նաև պատմագիտության հետազոտական սահմանները: Շուտով այս գործում

20 Տե՛ս **В. М. Даллин**, *Историки Франции XIX-XX веков*, М., 1981. с. 187.

21 Տե՛ս **J. Revel**, *Histoire et sciences sociales: les paradigmes des "Annales"* // *Annales: ESC*, N 6, (1979), p. 1361.

22 **Մ. Բլոկը** *Դիմադրության ակտիվ մասնակիցներից էր, պայքարում էր ֆաշիստական ռեժիմի դեմ և ձերբակալվելուց հետո գնդակահարվեց 1944 թ. հունիսի 16-ին*:

23 Տե՛ս **L. Febvre**, *Sur une nouvelle collection d'Histoire* // *Annales: ESC*, N 1, (1954), p. 6.

24 Տե՛ս **Ю. Н. Афанасьев**, *Историзм против эклектики: Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии*. М.: Мысль, 1980, с. 141.

աննալականների հետ համագործակցում են նաև պատմական ու հասարակական գիտությունների այս կամ այն ոլորտում մասնագիտացած շատ հանդեսներ: Եվ սկսվում է ստեղծագործական-հետազոտական բեղուն մի շրջան:

Պատմագիտական հարացույցների բարեփոխման հիմնախնդիրն իրենց յուրօրինակ լուծումներն առաջադրեցին աննալականների արդեն **երկրորդ սերնդի** ներկայացուցիչները՝ Ժ. Դյուբի, Ռ. Մանդրու, Է. Լերուա, Ժ. Մյոլրե, Պ. Գուբեր և այլք²⁵: Եվ մասնավորապես՝ Ֆ. Բրոդելը²⁶:

Աննալականների «բրոդելյան»²⁷ սերնդի հիմնական առանձնահատկությունը «**համընդգրկուն պատմություն**» հղացքի մշակումն էր: Դա ենթադրում էր պատմական անցյալի բոլոր բաղադրիչների ներառումը ժամանակի մեջ և անցյալի համակարգված, ընդգրկուն, բազմաչափ պատկերը: «Համընդգրկուն պատմություն» հղացքն առկա էր դեռ հիմնադիր-ուսուցիչների պատմասիրության մեջ, սակայն սաղմնային վիճակում: Նրա բաղադրիչները դեռ բավականաչափ ակտիվ չէին: Ֆ. Բրոդելը «համընդգրկուն պատմություն» հղացքի ծիրում կարողացավ ի մի բերել ամբողջի և մասի համահարաբերակցությունը: Այն դարձավ աննալականների «դասական» հարացույցներից մեկը: Աննալականների համար այս փուլում հետազոտության առաջնային խնդիրներից է դառնում նաև կառուցվածքային մոտեցումը: Միաժամանակ պահպանվում է հետադարձ կապը ավանդական լավագույնի հետ: Ընդամին, դա մի ժամանակաշրջան էր, երբ լայն տարածում էր ստացել կառուցաբանական (ստրուկտուրալիստական) հայեցակարգը՝ մարդաբանական (Կ. Լևի-Ստրոս), մշակութաբանական (Մ. Ֆուկո), հոգեբանական (Ժ. Լական) և այլ տարատեսակներով: Այս իմաստով՝ աննալականների երկրորդ սերնդի ներկայացուցիչներից ոմանք իրենց հետազոտությունները ծավալեցին աշխարհագրության, ժողովրդագրության, հոգեբանության, մարդաբանության և այլ բնագավառների համադրմամբ: Հանդեսի էջերում տպագրվում են նաև միջկրթանքային հետազոտություններ²⁸: Այս առումով ուշագրավ է Է. Լը Ռուա Լադյուրիի դիտարկումը, որ «գրեթե կես դար ֆրանսիական լավագույն պատմաբանները՝ Մ. Բյուկից մինչև Պ. Գուբեր, կիրարկել են կառուցաբանությունն իրենց հետազոտություններում, ճիշտ է, հաճախ չգիտակցելով այդ մասին»²⁹: Կառուցաբանությունը խթան հանդիսացավ պատմագիտական մի շարք կարևոր սկզբունքների վերակերպման համար: Դա էլ իր հերթին նպաստեց պատմության և ընկերային գիտությունների երկխոսության հետագա խորացմանը³⁰:

Սկզբնավորվելով լեզվաբանության մեջ՝ կառուցաբանությունը հետագայում տարածում գտավ այլևայլ գիտություններում՝ բանասիրության, առասպելաբանության, ընկերաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության, պատմության և այլն: Այն միտում ուներ վերացարկվելու կոնկրետ փաստերից, իրողություններից և անցքերից: Նրան հետաքրքրում էին դրանց համընդհանուր-տիպական կապերն ու հարաբերությունները: Այլ խոսքով՝ կառույցը, որն անտարբեր է ժամանակի նկատմամբ, կամ էլ փոփոխվում է շատ դանդաղ. «Կառույցը լինի այն գերկառույց, թե ենթակառույց, համապատասխանում է հասարակա-

25 1956 թ. Լ.Ֆևրի մահից հետո հանդեսի խմբագիրն էր Ֆերնան Բրոդելը և մնաց մինչև 1969 թվականը: Չևականորեն Բրոդելը խմբագրակազմի մեջ մնաց մինչև իր մահը (1985 թ.):

26 Տե՛ս P. Burke, op. cit., p. 15.

27 Ավելի մանրամասն տե՛ս Ս. Գովհաննիսյան, Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վեմ», N 1 (2010), էջ 98-119:

28 Տե՛ս E. Le Roy Ladurie, Histoire et Climax // Annales:ESC, N 1, (1959), p. 6-7.

29 E. Le Roy Ladurie, L'histoire immobile // Annales ESC, N 3, (1974), p. 676.

30 Տե՛ս J. Revel, Histoire et sciences sociales ..., p. 1368.

կան, տնտեսական կամ մշակութային իրողությունների երկարատևությանը»³¹: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ներթափանցելու պատմական իրադարձությունների այնպիսի խորքեր, որոնք անհասկանալի են այլ մոտեցումների պարագայում: Սակայն, կրկնենք մեկ անգամ էլ, այն անտարբեր է եզակիի և առանձնահատուկի նկատմամբ: Ուստի միակողմանիությունից խուսափելու համար այն պետք է համադրվի հետազոտական այլ հայեցակարգերի հետ:

Կառուցաբանության յուրացմամբ աննալականները, հանձին Ֆ. Բրոդելի, ընդհուպ մոտեցել էին «պատմական ժամանակի» նոր ըմբռնմանը: Արդեն 1958 թ. հանդեսի ծրագրային ներածականներից մեկում նշվում էր, որ «Բոլոր հումանիտար գիտությունները՝ անկախ նրանից, թե որքանով են նրանք ավանդապահ, ունեն ընդհանուր կետեր», այլ կերպ ասած՝ միևնույն ընկերային կամ հումանիտար իրողությունների վերաբերյալ պահանջում են տարասեռ հայացքներ: Արդ, եթե այդպես է, ապա «հասարակության մեջ եղել են, կան ու կլինեն այդ կրթանքների հանգույն՝ զուգամետության և տարամիտման փուլեր»³²: Հրաժարումն իրադարձային պատմությունից՝ «տնտեսական և ընկերային **համակցությունների (conjoncture)** բացահայտմամբ», Ֆ. Բրոդելը կարևորում էր իբրև Աննալների դպրոցի հիմնադիրների կարևոր ձեռքբերումն ու միաժամանակ զգուշացնում՝ չմնալ այդ տիրույթում և ուշադրությունը բևեռել **երկար տևողության (longue durée)** գործընթացների հետազոտության վրա:

Ուստի Ֆ. Բրոդելն առաջադրում էր ընկերային գիտությունների համադրության նոր մեթոդ: Այն մեկնարկում էր ընկերային ժամանակի նոր ըմբռնումից, համարելով, որ պատմաբանը չի կարող պատմությունը հետազոտել ժամանակի միայն մեկ չափումով: Նա առանձնացնում էր ժամանակի երեք հիմնարար չափույթ՝ «**կարճ տևողություն**» (*court durée*)՝ «**իրադարձային պատմություն**» (*l'histoire evenementielle*), «**միջին տևողություն**» (*midie durée*)՝ «**կապակցությունների պատմություն**» (*l'histoire conjoncturelle*) և «**երկար տևողություն**» (*longue durée*)՝ «**կառուցվածքային պատմություն**» (*l'histoire structurelle*) արտահայտիչներով³³: Նման ըմբռնումը տիպական է հանդեսի 1950-1960-ական թթ. հրապարակումներում³⁴:

Աննալականների **երրորդ սերնդի** (Ժ. Լը Գոֆր, Է. Լը Ռուա Լադյուրի, Մ. Ֆերրո, Պ. Շոնյու, Ժ. Ռևել, Ռ. Շարտյե, Պ. Դոսս, Պ. Ֆուրյե, Պ. Վիլար, Մ. Վովել և այլք) գործունեությունը ծավալվում էր 1970-ական թթ., երբ հանդեսի խմբագրակազմի մեջ ներգրավվեցին Ժ. Լը Գոֆր, Է. Լը Ռուա Լադյուրին, Մ. Ֆերրոն: Այս ժամանակաշրջանում Աննալների դպրոցի տարածումը (մասնավորապես՝ Ֆրանսիայում) այնքան մեծ էր, որ այն կորցրեց հետազոտական նպատակների և մեթոդների իր նախկին հստակությունը³⁵: Գրեթե նույն այս ժամանակ «**Նոր պատմագիտություն**» (*La Nouvelle Histoire*) հասկացությունը սկսում է ավելի հաճախ գործածվել թե՛ ֆրանսիական և թե՛ օտար պատմագիտական հրապարակումներում³⁶: Վերջինի հիսուն տարիներին հրատարակված պատմագիտական հոդված-

31 Տրվում է ըստ **А. Грабски**, Ф. Бродель: вопросы методологии истории цивилизаций, Цивилизации, Вып. 1, М., 1992, с. 181.

32 Տե՛ս **F. Braudel**, Histoire et sciences sociales. La longue durée // Annales: ESC, N 4, (1958), p. 725-726.

33 *Ibid.*, p. 729.

34 Այս մասին հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ բաժնում:

35 Տե՛ս **P. Burke**, op. cit., p. 2.

36 Տե՛ս **И. Олабарт**, «Новая» новая история: Структуры «большой длительности», // Ойкумена. Альманах сравнительных исследований политических институтов, социально-экономических систем и цивилизаций. Выпуск 2. -Харьков: Константа, 2004, сс. 176-207.

ներում և հետազոտություններում այս ուղղությունը համաշխարհային պատմագիտության նշանակալի իրադարձություններից են համարում³⁷:

Աննալականների երրորդ սերնդի ներկայացուցիչները ենթադրում էին, որ «Նոր պատմագիտությանը» վերապահված է հույժ կարևոր դեր՝ «փոխակերպել մարդկանց կոլեկտիվ հիշողությունը և ստիպել գիտության ու գիտելիքի համալիրին կայանալու ժամանակային երկար տևողության ծիրում: Ըստ այդմ՝ գիտության մեջ կարևորվում է հասարակության բարեշրջության գաղափարը»³⁸: «Նոր պատմագիտությունը» աննալականների բազմապարունակ տեսություններից մեկն էր: Այն շարունակում էր հիմնադիր-ուսուցիչների ավանդները: Այդուհանդերձ՝ այն արդեն դուրս էր եկել աննալականների ավանդական դարձած սահմաններից՝ ներառելով պատմագիտական այլ ուղղություններ:

Հատկանշական է, որ կառուցաբանության ազդեցությամբ ժամանակի «կարճ տևողությունից» ուշադրության տեղաշարժը դեպի «երկար տևողությունը», որոշ պատմաբանների մոտ կոնկրետ պատմական իրադարձությունների հանդեպ «արհամարհանքի» տեղիք տվեց: Եվ դա հանգեցրեց արդարացի հակազդեցության: Պատմագիտության մեջ այժմ կրկին առաջին պլան է մղվում հետաքրքրությունն առ կոնկրետ (քաղաքական) իրադարձություններն ու անցքերը³⁹: Անշուշտ, խոսքը հին քաղաքական պատմության վերադարձի մասին չէ: Ժ. Լը Գոֆն արդեն այդպիսի հարցադրում արել էր. հնարավոր է արդյոք արդի պատմագիտության վերադարձն առ քաղաքական պատմությունը, և, եթե հնարավոր է, ապա ի՞նչ կերպ⁴⁰: Ըստ նրա՝ քաղաքական պատմությունը հնարավոր է որպես «քաղաքական մարդաբանություն», որպես պատմություն, որը բացահայտում է կոնկրետ իրադարձությունների իմաստային խորքերը՝ շնորհիվ «խորհրդանիշերի, ծեսերի, իշխանական արարողակարգերի համակողմանի հետազոտության»: Իսկ քաղաքական պատմության հանդեպ պատմագիտության հետաքրքրությանն անդրադառնալով՝ Ժ. Դյուբին բացատրում է, որ դա բոլորովին էլ չի նշանակում վերադարձ առ այն, ինչ եղել է հանդեսի հիմնադիրներից առաջ. «Այսօր ֆրանսիացի պատմագետները վերադառնում են առ իրադարձությունը՝ փոխհարստացած իրենց կետարյա փորձառությանը»⁴¹: Հետաքրքրության մեծացումը քաղաքական պատմության նկատմամբ պայմանավորված է նաև մեկ այլ իրողությամբ: Բանն այն է, որ 1960-ական թվականներին Եվրոպայի հասարակական կյանքում իշխանական կառույցների դերն անհամեմատ ակտիվացնում է⁴²:

Աննալականների այս նոր սերունդը, հավատարիմ մնալով Լ. Ֆերի, Մ. Բլոկի և Ֆ. Բրոդելի պատմասիրական ոգուն, փորձում էր դրան հաղորդել նոր բովանդակություն⁴³: Նրանք բրոդելյան «համընդգրկուն պատմության» հղացքը սկսե-

37 Տե՛ս **J. H. Hexter**, Fernand Braudel and the «Monde Brodellien»// Journal of Modern History, N 4, (1972), p. 468: Ինչպես նաև՝ **R. Andrews**, The Mediteranian.// New York Times Book Review, N 18 (1975): La recherche historique en France depuis 1965. Paris, 1980; H. Coutau-Begarie, Le phenomene «Nouvelle Histoire». Paris, 1984.

38 **La nouvelle histoire**. // Sous la direction de J. Le Goff et R. Chartier, J. Revel, Paris, 1978, (Les encyclopedies du savoir moderne), p. 236.

39 Տե՛ս **P. Burke**, op. cit., p. 3.

40 Տրվում է ըստ՝ **А. Я. Гуревич**, «Новая историческая наука» во Франции: Достижения и трудности (критические заметки медиависта) - в книге «История и историки 1981», М., 1985, с. 121.

41 **Ж. Дюбин**, Развитие исторических исследований во Франции после 1950 года, // **Одиссей. Человек в истории**. М., 1991, с. 55.

42 Այս հիմնախնդիրներին են նվիրված Միշել Ֆուկոյի գրեթե բոլոր աշխատությունները, որոնք լայն ճանաչման են արժանանում փարիզյան գիտական շրջանակներում, այնուհետև՝ աշխարհում:

43 Տե՛ս **Fernand Braudel** (1902-1985) // Annales:ESC, N 1, (1986), p. 6.

ցին կերպարափոխել գիտական տարասեռ մոտեցումների համադրմամբ: Դրանով մերժվում էր պատմական երևույթների իմաստավորման միագիծ մոտեցումը: Աննալների նոր խմբագրակազմն այդ կապակցությամբ նշում է. «Նա (Բրոդելը-Ս.Հ.) ուներ մարդու մասին գիտությունների ձեռքբերումների միասնացման **համընդգրկուն պատմության** նախագիծ: Մենք զբաղվեցինք առավելաբար տեղական (local) ծրագրերով: Հույս ունեինք սևեռուն ուշադրություն դարձնել հետազոտական մեթոդներին և ճշտորեն որոշարկել տարասեռ կրթանքների համադրման կարևորությունը»⁴⁴:

Պատմության տեղայնացումը պատճառ դարձավ նրա **անհատագերծմանը** (dehumanisation): Դրան էլ հետևեց նրա **կոտորակումն ու քանակայնացումը**: Պատմական առանձին իրադարձություններն ու դրվագները, կորցնելով իրենց առանձնահատկությունները, վերածվեցին **հաջորդական շարքերի (sérielles)**⁴⁵: Աննալականներից Ֆ. Ֆյուրեն, ընկնելով ծայրահեղությունների մեջ, անգամ առաջարկում էր վերջ տալ պատմական անցյալի բազմակողմանի վերարտադրման ձգտումներին⁴⁶: Իսկ Է. Լը Ռուա Լադյուրին ֆրանսիական պատմագրություններն ուժեղացնելով ամերիկյան մեթոդները, կարծում է, թե պատմագետը կոչված է սոսկ տվյալներ հայթայթել «այլ մասնագետների՝ տնտեսագետների, ընկերաբանների, ազգաբանների համար»⁴⁷: Ըստ նրա՝ պատմագետի ճակատագիրն է «անընդհատ ու անդադար հաշվել ու հաշվել» և հաշվումների «շնորհիվ է, որ գոյություն ունի պատմությունը, որը քանակային է»⁴⁸:

Պատմության քանակային դիտարկման տրամաբանությունն ի վերջո կարող է հանգեցնել «պատմությունն առանց մարդկանց» սկզբունքին: Իսկ դա հակասում էր դպրոցի հիմնարար գաղափարին՝ «մարդակենտրոնությանը», քանզի սկսած հիմնադիր-ուսուցիչներից, պատմության կենտրոնատեղին մարդն էր: Է. Լը Ռ. Լադյուրին առաջարկում է կատարել միայն կոնկրետ հետազոտություններ, որոնց առարկան մարդը չէ՝ ո՛չ կենտրոնում, ո՛չ էլ ծայրամասերում⁴⁹: Նա ձևակերպում է իր ծայրահեղորեն միակողմանի բանաձևը. «Վաղվա պատմագետը պետք է լինի ծրագրավորող կամ էլ գոյություն չպետք է ունենա»⁵⁰:

Աննալականների երրորդ սերնդի մեկ այլ ներկայացուցիչ՝ Պ. Շոնյուն, «քանակային պատմություն» եզրի փոխարեն նախընտրում էր «**շարային պատմություն**» (*l'histoire sérielle*) եզրը, գտնելով, որ «իրադարձությունները» պետք է դիտարկել միայն «շարայնության» մեջ, երբ դրանք ենթարկվում են մաթեմատիկական մշակման, իսկ առանց մաթեմատիկական գործողությունների «չկա գիտական գիտելիք»: Ըստ Պ. Շոնյուի՝ «պատմությունը ընկերային գիտություն է, որը հաշվում է և չափագրում»⁵¹: Շարային պատմությունը «փնտրում է կրկնվող փաստերը, ուշադիր է փաստերի հաջորդականության հանդեպ, որը համառորեն և պարբերաբար վտարում է անմշակ ոչ վիճակագրական նյութերը»⁵²: Դրա

44 Ibid.

45 Տե՛ս **P. Chaunu**, Un nouveau champ pour l'histoire sérielle: le quantitatif au troisième niveau. - In: *Mélanges en l'honneur de Fernand Braudel*. Paris, 1973, vol. 2, p. 106. - Տրվում է ըստ՝ **М. Н. Соколова**, Критика современной буржуазной и реформистской историографии, М., 1974, с.111-112.

46 Տե՛ս **F. Furet**, L'Atelier de l'Histoire, Paris, 1982, p. 172.

47 **E. Le Roy Ladurie**, op. cit., p. 14.

48 Ibid., p. 20.

49 Ibid., p.13.

50 Ibidem.

51 **P. Chaunu**, Histoire science sociale : la durée, l'espace et l'homme à l'époque moderne, Paris, 1974, p. 325.

52 P. Chaunu, Un nouveau champ ..., p. 106.

հետևանքով պատմությունը մասնատվում է ըստ **շերտագրումների (stratigraphiques)**, որոնք միմյանցից հարաբերականորեն անկախ են: Եվ պատմության յուրաքանչյուր շրջավուլ, յուրաքանչյուր հանրույթ հիմնվում է նախկինում կրկնվող գործընթացների վրա: Ուստի պատմատիրության շարայնացումը նպատակ ունի հետազոտական նյութի յուրաքանչյուր միավորին (իրադարձություն, դեպք, անցք) տալ անկախություն՝ այլ միավորների հետ փոխհարաբերություններում: Պատահականություններն, ըստ էության, տեղ չունեն շարային պատմության ծիրում: Հետազոտության առարկան արդեն ոչ թե կոնկրետ հասարակությունն է, այլ վերացական մոդելներն ու կառույցները՝ միասնականացված, համահարթեցված⁵³:

«Քանակային» կամ «շարային» պատմությունը, հարկավ, հակադրվում է Ֆ. Բրոդելի «համընդգրկուն պատմության» հղացքին: Բայց ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է նկատել, որ դրա ինչ-ինչ տարրերն առկա էին անգամ հիմնադիր-ուսուցիչների աշխատություններում: Խոսքը տեղական (լոկալ) պատմություններից համաշխարհային (գլոբալ) պատմությանն անցնելու նրանց ճիգերին ու մեթոդներին է վերաբերում⁵⁴: Նրանք երբեմն խոսում էին «պատմության համընդգրկուն օրենքի և սկզբունքի» մասին:

Մինչդեռ Ֆ. Բրոդելը կտրականապես դեմ էր. նա շեշտում էր, որ դրա կիրարկման վերջին փորձը պատկանում է դրապաշտներին ու մարքսիստներին և կապված է «մարդկության անընդհատ առաջընթացի գաղափարին»⁵⁵: Իր հողվածներից մեկում Ֆ. Բրոդելն անդրադառնալով այս հարցին՝ առաջնային է համարում պատմական գործընթացի ռիթմային բազմազանությունը և բացառում «եզակի գործոնի վրա» կառուցված պատմությունը⁵⁶: Եվ դա այն դեպքում, երբ իր գիտական գործունեության սկզբին նա այդ բազմազանության մասին ոչինչ չգիտեր: Միով բանիվ՝ «նա մոտեցել էր իր իսկ ստեղծած համակարգի հաղթահարման սահմանագծին»⁵⁷, որին և ընթացք տվեցին երրորդ սերնդի աննպակասները:

Պատմագիտական այս փոխակերպումների ծիրում ուշագրավ է և **չորրորդ սերնդի** խնդրականը: Այս շրջանը հաճախ պատմաբանները անվանում են բեկումնային ժամանակաշրջան⁵⁸: Ճգնաժամը կողմնորոշումների և հետազոտական հարացույցների հետարդիական (պոստմոդեռնիստական) քննադատության արդյունք է՝ 59: Ընդամին, հետազոտողների մեծ մասն այն կարծիքին է, որ այդպիսի սերունդ այդպես էլ չձևավորվեց⁶⁰, քանի որ նոր պատմագետները չձևակերպեցին իրենց միասնական պատասխանը պատմության առջև ծառայած մարտահրավերներին՝ «փոփոխելով պատմությանն ուղղված իրենց հարցերի բնույթն ու

53 Տե՛ս **Ю. Н. Афанасьев**, Эволюция теоретических основ школы «Анналов» // Вопросы истории. – М., N 9 (1981), с. 89.

54 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրության հնարավորություն), «Պատմություն և կրթություն», Ե., N 1-2, (2005), էջ 19:

55 **Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան**, անդ, էջ 40:

56 Տե՛ս L'histoire et ses méthodes. Recherche, conservation et critique des témoignages. Sous la direction de Charles Samaran de l'Institut (Encyclopédie de la Pleiade), Paris, 1961, p. 65, տե՛ս նաև՝ F. Braudel, Positions de l'Histoire en 1950, // F. Braudel, Ecrits sur l'Histoire, Paris, Flammarion, 1969, pp. 20-21.

57 **Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, անդ, էջ 40:**

58 Տե՛ս **Ю. Бессмертный**, Школа „Анналов“: весна 1989 г., „Европейский алманах“, М., 1991, с. 139.

59 Ավելի մանրամասն տե՛ս **J.-F. Lyotard**, La Condition Postmoderne: Rapport sur le Savoir. Les Editions de Minuit, 2000.

60 Տե՛ս **C. Barros**, La escuela de Annales y la historia que viene, URL: //http://www.h-debate.com/cbarros/ spanish/index2.htm // (07.05.2007); **F. Dosse**, L'histoire en miettes. Des Annales à la “nouvelle histoire”, Paris, 2005, p. 255.

իմաստը»⁶¹:

1980-ական թվականներին ի հայտ եկան աննալականների **չորրորդ սերնդի** միայն նախանշանները (Բ. Լեպտի, Ժ.-Ի. Գրենյե և այլք), որոնք դրսևորվում են պատմագիտության նոր հիմնախնդիրների և հետազոտական մեթոդների մշակման ճիգով: Փնտրտուք, որը դեռ չի ավարտվել... 1988 թվականին հանդեսի խմբագրականում՝ «**Պատմությունը և հասարակական գիտությունները: Վճռական շրջաբեկում**»⁶², խոսվում էր «Ժամանակաշրջանի անորոշության» մասին, վկայակոչելով այն փաստը, որ աննալական դպրոցի ծաղկումն ինքնին պատմագիտության և հասարակական գիտությունների համադրման հնարավորությունն էր, որը թույլ էր տալիս բարեփոխել նրա հետազոտության առարկան, հիմնախնդիրն ու ընթացակարգը:

Հասարակական գիտությունների ճգնաժամը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ պատմագիտության վրա: Եվ խմբագրականի հեղինակները ճգնաժամի պատճառները տեսնում էին նրանում, որ **նախ**՝ վերջին տասնամյակներին վերակերպվել են գիտական կրթանքների միջև եղած սահմանները և **երկրորդ**՝ նախկինում գերակայող մի շարք տեսություններ (կառուցաբանություն, մարքսիզմ և կլիոմետրիկա) այլևս վստահություն չեն վայելում: Եվ պատմագետները հասարակական գիտությունների մեջ չգտնելով անհրաժեշտ հենարան, վերադառնում են առ **պատումը (narrative)** և ավանդական իրադարձությունը⁶³:

Չնայած այդ ամենին՝ հանդեսի խմբագիրները չեն հրաժարվում «համընդգրկուն պատմության» հղացքից, ավելի շուտ՝ վերակերպափոխում են այն, ակտիվացնելով նրա ոչ թե ընդգրկունությունը, այլ վերլուծություն-համադրություն հնարավորությունները: Ինչպիսին էլ լինի վերջինիս ծավալը, ըստ նրանց՝ պատմական հետազոտության խնդիրը միշտ էլ ընկերային փոխազդեցությունների (որպես ամբողջի) հետազոտությունն է: Եվ պատմական հետազոտության խնդիրը տեղաշարժելով միկրոպատմության տարածք, այդուամենայնիվ, այն դիտարկվում է «Ժամանակի երկար տևողության» համապատկերում⁶⁴:

Այս իմաստով՝ ճգնաժամի մասին դատողությունները ձեռք են բերել բոլորովին այլ բովանդակություն և իմաստ: Բանն այն է, որ «ճգնաժամը», որքանով այն վերաբերում է հին հարացույցների բեկանմանը, վերաբժևորմանը, նույնքան էլ վերաբերում է նոր հարացույցների առաջացմանը: Այս ենթատեքստում էլ, թերևս, հարկ է խոսել աննալականների նոր փուլի մասին, քանի որ հանդեսի էջերում շարունակվում են արտահայտվել անցյալի վերաբժևորման մեթոդների, հին ու նոր հարացույցների համադրման հետազոտական մոտեցումների անհրաժեշտության մասին: Ուստի շրջանառվող «ճգնաժամ» հասկացությունը կարելի է փոխարինել «շրջաբեկմամբ», քանի որ խոսքն առավելաբար պատմագիտության նոր հնարավորությունների դաշտի ձևավորման մասին է: Ասվածի խոսումն վկայությունն է և այն, որ արդեն հանդեսի 1989 թվականի վերջին համարում տեղ են գտնում ճգնաժամը հաղթահարելուն միտված զանազան տեսական հոդվածներ:

Ամփոփենք: Աննալների դպրոցի ձեռքբերումներն անուրանալի են: Դրանք նպաստել և նպաստում են պատմագիտության հետազոտական տիրույթի ընդ-

61 Ա. Ստեփանյան, անդ, էջ 19:

62 *Histoire et sciences sociales. Un tournant critique?*, Annales: ESC, 1988, N 2, pp. 291-293.

63 Տե՛ս Բ. Լեպտի, Ժ.-Ի. Գրենյե, О некоторых изменениях в журнале «Анналы» в 1994 г. (Ответы на вопросы Ю. Л. Бессмертного), // Одиссей: Человек в истории, РАН, Ин-т всеобщ. истории, М., 1994, с. 1316.

64 Տե՛ս Կ. А. Агиierre Рохас, Критический подход к истории французских “Анналов”, М., 2006, с. 180.

լայնմանն ու որակական զարգացմանը: Դպրոցի շնորհիվ փոխվել են հասարակական գիտությունների սահմաններն ու փոխհարաբերությունների կերպը: Պատմագիտությունը ստանձնել է անցյալի, ներկայի և ապագայի հեռանկարների կառուցակազմման բարդ առաքելությունը: Նման հանձնառությունը, ինչպես նշել ենք, հաճախ որակվում է իբրև «ֆրանսիական պատմագիտական հեղաշրջում»⁶⁵:

2. Լյուսիեն Ֆերի և Մարկ Բյուկի հիմնարար հայացքները

Աննալների հիմնադրման պահից ի վեր Լ. Ֆերն ու Մ. Բյուկն իրենց առջև նպատակ էին դրել պայքարել «Ընդդեմ սահմանազատման, ներփակության, անջրպետման, որոնք աղճատում, մեկուսացնում են պատմությունը»⁶⁶: Նրանք հաստատում էին, որ պատմագիտությունը վերակերպման խիստ անհրաժեշտություն ունի⁶⁷: Ուստի հույժ կարևոր է դպրոցի հիմնադիր-ուսուցիչների հայացքների դիտարկումը XIX դարի վերջի-XX դարի սկզբի պատմագիտական մտքի զարգացումների համատեքստում:

Մինչ Աննալների հրատարակումը՝ Լ. Ֆերն ու Մ. Բյուկը իրենց հողվածներում և մենագրություններում բազմիցս հանդես են եկել ընդդեմ պատմության a priori գնահատման և, ի հակադրություն հին հայացքների, ձգտում էին պատմության մեջ գտնել այն առանցքայինը, որի շուրջ հնարավոր լիներ համախմբել առաջին հայացքից միմյանցից տարանջատ գործընթացները, իրադարձությունները, հասարակական խմբերն ու առանձին մարդկանց: Ինչպես նշել ենք՝ համանման պատմահետազոտական խնդիր էին հետապնդում **Է. Գյուրկիսյանի** ընկերաբանությունը, **Վ. դը լա Բլաշի** «մարդկային հանրույթների աշխարհագրությունը», **Ա. Բեռի** «պատմական համադրությունը»: Նույն նպատակն էին հետապնդում նաև գերմանական հումանիտար մտքի ծիրում մշակված պատմական օրինաչափությունների (**Կ.Մարքս**), պատմության իդեալական կառուցակերպերի (**Մ. Վեբեր**), պատմության բանական կարգաբերման (**Վ. Գիլբայ**), բնագիտության և պատմության ներհակության (**Վ. Վինդելբանդ**, **Հ. Ռիկերտ**), սոցիոհոգեբանական պատմության (**Կ. Լամպրեխտ**) այլազան տեսությունները⁶⁸:

Լ. Ֆերն իր հետազոտական գործունեությունը մեկնարկել է որպես աշխարհագրագետ: Ավելի ուշ նա իր հետազոտության գիտաբեման դարձրել է մինչարդիական և նոր դարերի Եվրոպայի պատմությունը՝ նշանակալի տեղ հատկացնելով Վերածննդի մշակույթի պատմությանն ու պատմական հոգեբանությանը:

Նրա առաջին մենագրության մեջ՝ «**Ֆիլիպ II-ը և Ֆրանշ-Կոնտեն**»⁶⁹, արդեն առկա էր հարակից կրթանքների հետազոտական մեթոդների միջոցով պատմությունն ամբողջացնելու և ընդհանրացնելու մոտեցումը: Դա մի փոքրիկ շրջանի՝ **Ֆրանշ-Կոնտեի** պատմությունն է՝ հրնթացս Կարլ V-ի (1516-1555) կառավարման

65 P. Burke, op. cit., p. 111.

66 M. Bloch, Le congrès des sciences historiques d'Oslo (1928) // *Annales*: ESC, N 1, (1929), p. 73.

67 Տե՛ս P. Burke, op. cit., p. 6.

68 Այս տարասեռ տեսությունների համահավաք քննադատությունը տե՛ս A. Marwick, The New Nature of History, Knowledge, Evidence, Language, London, 2001, pp. 56-59, 94-96, 119-126 etc.

69 L. Febvre, Philippe II et la Franche-Comté. Étude d'histoire politique, religieuse et sociale, Paris, Honoré Champion, 1911, Rééd. 1970. Ընդամին, Լ. Ֆերը Ֆրանշ-Կոնտեի վերաբերյալ ունի ևս երկու այլ մենագրություններ Idem. Notes et documents sur la Réforme et l'Inquisition en Franche-Comté, Paris, 1911, Idem. Histoire de Franche-Comté, Paris, 1912.

անցումային լարված պայմանների, որոնց հետևանքով գահը հանձնվում է նրա որդի Ֆիլիպ II-ին (1555-1598): Այս հետազոտության առանցքը դեռևս քաղաքական պատմությունն էր, բայց Լ. Ֆերը հետազոտական դաշտ էր ներբերում հասարակական և կրոնական բախումների հիմնախնդիրը՝ մասնավորապես շեշտը դնելով բնական-աշխարհագրական միջավայրի և մարդկային հանրության փոխհարաբերությունների վրա: Ավելի կոնկրետ՝ Լ. Ֆերը հետազոտում էր ոչ միայն Նիդեռլանդների հակախապանական ապստամբությունները (1566-1609 թթ.) և բացարձակ միապետության կայացումը, այլև երկու ընկերային դասերի՝ ազնվականության և բուրժուազիայի «կատաղի» պայքարի պատմությունը⁷⁰:

Նա համադրում էր մի կողմից ընկերային, տնտեսական և քաղաքական կառույցների և մյուս կողմից՝ աշխարհագրական միջավայրի, մշակույթի, մարդկանց մտակեցվածքների ու վարքի բարդ կապերն ու փոխազդեցությունները: Լ. Ֆերի այս հետազոտության մեջ արդեն տեսնում ենք հասարակական դասերի և խմբավորումների բախումների, աղքատության, «մարդկանց գերաճի», գների տատանումների, բնական աղետների (1584-1585 թթ. ժամառախտը), ֆեոդալական կարգերի քայքայման և բուրժուազիայի բարձրացման պատմությունը: Գլխավոր դերակատարը մարդն է. «Մարդու մասնակցությունը տիրապետող է: Նա պետք է կոփի իր երկիրն ու դրա քաղաքական ամբողջությունը»⁷¹:

Լ. Ֆերի գիտական գործունեության առաջին շրջանի մյուս նշանավոր աշխատությունը դեռ Առաջին աշխարհամարտից առաջ նախաձեռնած **«Երկիրը և մարդկային հանրության բարեշրջությունը»**⁷² հետազոտությունն է, որի ենթավերնագիրը՝ «Պատմության աշխարհագրական ներածություն», արդեն իսկ խոսում է թեմայի մեջ աշխարհագրական գործոնի առանցքայնության մասին: Այն գրվել էր Ա. Բեռի «Մարդկային հանրության բարեշրջությունը» ծրագրային մատենաշարի համատեքստում և վերաբերում էր մարդկության «նախապատմությանն» ու հին շրջանին: Հետազոտությունը նորից նվիրված է մարդկային հանրության վրա աշխարհագրական միջավայրի ազդեցության հիմնախնդրին: Հաջող փորձ էր կատարվում համադրելու միմյանց նկատմամբ հակադիր «մարդկային հանրության աշխարհագրություն» (լաբլաշականություն) և «հասարակական ձևաբանություն» (դյուրկհայմականություն) հոլացքները: Այդ հետնախորքի վրա Լ. Ֆերը կարողացավ (ակադեմիական սահմաններից դուրս) հետազոտական մի նոր դաշտ ձևավորել: Դա նրան թույլ տվեց կատարելու համընդգրկուն համադրություն⁷³: Ըստ նրա՝ համադրական պատմության ծիրում է հնարավոր աշխարհագրության և ընկերաբանության երկխոսությունը⁷⁴: Լ. Ֆերը փորձում էր ցույց տալ, որ պատմության մեջ «ամեն ինչ կապակցված է, բայց ոչինչ մեկնաբանված չէ»⁷⁵: Նա հակադրվում էր գերմանական աշխարհաքաղաքական դպրոցին և «մարդկային աշխարհագրության» հիմնադիրներից մեկին՝ Ֆ. Ռաթցելին, որը մարդկության (և մարդկանց) ճակատագրում բացարձակացնում էր աշխարհագրական միջավայրի դերը: Այս կապակցությամբ Լ. Ֆերը շեշտում էր, որ աշխարհագրական միջավայրը պատմության մարտահրավերներին կարող

70 Տե՛ս Լ. Febvre, Philippe II et Franch-Comté ..., op. cit., p. 9.

71 *Ibid.*, p. 30-31.

72 Լ. Febvre, La Terre et l'évolution humaine. Introduction géographique à l'histoire. Avec le concours de Lionel Bataillon. Paris, 1922. Rééd. Paris, 1970.

73 Տե՛ս Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia, Les courants historiques en France (19^e-20^e siècle), Paris, 2005, p. 119.

74 Տե՛ս F. Dosse, op. cit., p. 74.,

75 Լ. Febvre, La Terre et l'évolution humaine ..., p. 257.

է տալ տարբեր պատասխաններ: Ամեն ինչ կախված է մարդկային (և հասարակական) գործոններից⁷⁶: Այլ խոսքով՝ Վ. դը Լա Բլաշի աշխարհագրական հայեցակարգը Լ. Ֆերի համար հիմք էր՝ իրականացնելու դիմամիկ և բաց հետազոտություն, որի ծիրում ուրվագծվում են միջկրթանքային երկխոսությունները:

Նույն մտտեցմամբ Լ. Ֆերն անդրադառնում է նաև «մտակեցվածքների պատմությանը»: Նրա համար կարևոր են նաև «պատմության հոգեբանական տվյալները⁷⁷: Մտակեցվածքի և հոգեբանության համադրության արդյունքը դարձան «Մի ճակատագիր. Մարտին Լյութեր»⁷⁸ և «Անհավատության հիմնախնդիրը XVI դարում. Ռաբլեի կրոնը»⁷⁹ մենագրությունները: Առաջինը նվիրված էր XVI դարի առաջին կեսին գերմանական հասարակության և Մարտին Լյութերի միջև առաջացած լարվածությանն ու ռեֆորմացիոն շարժման հիմնախնդիրներին: Իսկ մյուսը՝ XVI դարի մարդկանց և հասարակական միջավայրի փոխհարաբերությունների հիմնախնդիրներին՝ Ռաբլեի ստեղծագործության և կենսագրության, մասնավորապես՝ հավատի և անհավատության համատեքստում:

Գրանցում Լ. Ֆերը մեկնարկում էր Ա. Բեռի «պատմությունը հոգեբանություն է» դրույթից՝ հակադրվելով մարդու (կամ մարդկային հանրույթի) վերաբերյալ մեկուսի ընկալմանը: Մտակեցվածքային և հոգեբանական աշխարհների համադրական վերլուծություն իրականացնելու նպատակով նա իր սևեռումի կենտրոնում պահում էր անհատականության հիմնախնդիրը: Մ. Լյութերի և Ֆ. Ռաբլեի⁸⁰ հոգեբանությունը նա համադրում էր XVI դարի մտակեցվածքի հետ, փորձում պարզել այն միջավայրը, այն բանական մթնոլորտը, ուր կայացել է նրանց աշխարհատեսությունը. «Յուրաքանչյուր դարաշրջան բանականորեն արարում է աշխարհի իր սեփական պատկերը»⁸¹: Վեր են հանվում այդ ժամանակների համակեցական կյանքը և մարդկանց մտածողությունը, որոնք բուրդովին այլ են եղել: Լ. Ֆերը ձգտում էր XVI դարը կարդալ ոչ «XX դարի մարդու», այլ XVI դարի մարդու աչքերով⁸²: Ակնհայտ է դառնում, որ մտակեցվածքի տիրույթում հանդիպում և համադրվում են պատմության անհատական և կոլեկտիվ ձգտումները: Եվ Լ. Ֆերի հետազոտությունը սոսկ Մ. Լյութերի կենսագրությունը չէր, այլ «մարդու և հանրույթի միջև առկա փոխհարաբերությունների հիմնախնդրի քննարկումը»⁸³: Նրա հետազոտությունը դուրս էր գալիս քաղաքական պատմության ավանդական սահմաններից՝ լրացուցիչ խորություն հաղորդելով պատմության ընկալմանը⁸⁴:

Իր մենագրությունների մեջ Լ. Ֆերը լուծել է երկու հիմնական խնդիր. առաջին՝ ցույց է տվել տարբեր դարաշրջանների մարդկանց մտակեցվածքների տարբե-

76 *Ibid.*

77 F. Dosse, op.cit., p. 78.

78 L. Febvre, Un Destin. Martin Luther, Paris, Presses Universitaires de France, 1928. Rééd. Paris, 1988.

79 L. Febvre, Le problème de l'incroyance au XVIe siècle. La religion de Rabelais, L'évolution de l'humanité, Paris, Albin Michel, 1942, Rééd., 1968.

80 Այդ նույն ժամանակ ռուս խոշոր բանասեր Ս.Բախտինը, նույնպես մեկնարկելով զանգվածային գիտակցության հիմնախնդրից, առաջադրում է հումանիտար հետազոտության մեկ այլ կառնավայրային ծիծաղի մշակույթի ուղղությունը: Մ. Բախտինի Ռաբլեի վերաբերյալ հետազոտության մեջ նորովի են վերարժևորվում այդ մշակույթի խորքային շերտերը, որը հարցականի տակ է դնում ողջ ընտրանու «լուրջ» մշակույթի հիմնարար արժեքները՝ վերակերպավորելով և հարաբերականացնելով դրանք: Ս. Բախտինին ծանոթ էր Լ. Ֆերի հիշյալ աշխատությունը: Տե՛ս **Մ. Մ. Бахтин**, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, М., 1966.

81 L. Febvre, Le problème de l'incroyance..., p. 2.

82 G. Bourde, H. Martin, Les Écoles historiques, Paris, 1997, p. 221.

83 P. Burke, op.cit., p. 21.

84 Տե՛ս **Պ. Ռիկեր**, Память, история, забвение / Пер. с фр. И. И. Блауберг и др. - М.: Изд-во гуманитарной литературы, с. 267.

րությունը և երկրորդ՝ մտակեցվածքների և ընկերային կյանքի բարդ փոխհարաբերությունները: Այս առումով Լ. Ֆերը պատմագիտական հետազոտության տիրույթ ներբերեց «**մտակեցվածքային փաստերը**» (**faits de mentalite**) քաղաքակրթությունների ընդարձակ հետնախորքի վրա դիտարկելու խնդիրը:

Ի տարբերություն Լ. Ֆերի, Մ. Բլոկը առանձնահատուկ հակում ուներ դյուրկհայնյան ընկերաբանության հանդեպ: Նա էլ իր հետազոտական գործունեությունը մեկնարկում էր աշխարհագրական հարացույցից: Նրա «**Իլ-դը-Ֆրանս. երկրամաս՝ Փարիզի շուրջ**»⁸⁵ մենագրության մեջ նույնպես առկա էր «հիմնախնդրային կողմնորոշումը»: Այստեղ նա, ինչպես Լ. Ֆերը, մի փոքրիկ երկրամասի տեղային պատմության հետնախորքի վրա վերակառուցում է դարաշրջանի ընդհանուր պատկերը:

Մեկնարկելով աշխարհագրական հետազոտական մեթոդաբանությունից՝ Մ. Բլոկն առաջնորդվում էր դյուրկհայնյան ընկերաբանության և պատմագիտության երկխոսայնացման մեթոդով: Եվ շատ դեպքերում աշխարհագրությունը նա փոխարինել է ընկերաբանությամբ⁸⁶: Ներկայացնելով «Իլ-դը-Ֆրանսը որպես մեկուսի տարածքային միավոր»⁸⁷՝ Մ. Բլոկին հաջողվել է համադրել իրավական, տնտեսական և բանասիրական մոտեցումները: Ի տարբերություն Լ. Ֆերի, նա այս աշխատությամբ ավելի շատ ներդրում ուներ ընկերաբանության, քան աշխարհագրության և պատմության մեջ⁸⁸: Այդուամենայնիվ, թե՛ Լ. Ֆերի և թե՛ Մ. Բլոկի մոտ արդեն ուրվագծվում էր միջկրթանքային համադրական մոտեցումը:

Մ. Բլոկի միջկրթանքային համադրությունն ավելի վառ արտահայտություն գտավ նրա «**Հրաշագործ արքաները**»⁸⁹ մենագրության մեջ: Դրա առանցքը «ձեռնադրման ճանապարհով» ֆրանսիական և անգլիական արքաների՝ գեղծախտով հիվանդներին բուժելու ունակության մասին հավատի սոցիալ-իմացաբանական քննությունն է: Հեղինակն սկսում է գեղծախտի վերաբերյալ XIV-XVI դարերի բժշկությանը հայտնի բոլոր տվյալների համակարգումով: Միջնադարյան այդ հիվանդությունը այնքան տարածված էր, որ «Բուժում տենչացող անթիվ հիվանդներ պատրաստ էին դիմելու ցանկացած միջոցի, որպիսին ցուցանում էր ավանդույթը: Ահա այն մեկնակետը, որն անպատճառ պետք է նկատի ունենա հետազոտողը՝ «արքայական հրաշքն» ուսումնասիրելիս»⁹⁰: Մ. Բլոկը դիմում էր հարակից մի շարք կրթանքների ձեռքբերումներին, այդ թվում՝ կոլեկտիվ հոգեբանության, մտակեցվածքների պատմության, համադրական ազգաբանության, կենսաբանության, բժշկության, ընկերային պատմության և բանասիրության: Ըստ այդմ՝ «արքայական հրաշքի» հանդեպ հավատի պատմությունը՝ ծագումը, տարածումը և աստիճանական անկումը, մենագրության մեջ դիտարկվում է Միջնադարի և Վաղ նոր ժամանակների քաղաքակրթական համատեքստում⁹¹:

Հետազոտողները այս մենագրության ձեռքբերումներից առանձնացնում են երեքը: **Առաջին**, Մ. Բլոկը չի սահմանափակվել սույլ պատմական մի ժամանա-

85 M. Bloch, L'île-De-France (Les Pays Autour De Paris), Paris, 1913.

86 Տե՛ս J. Stengers, Marc Bloch et l'histoire, // Annales: ESC, N 3, (1953), p. 332.

87 F. Dosse, op.cit., p. 74.

88 Տե՛ս P. Burke, op.cit., p. 16.

89 M. Bloch, Les Rois thaumaturges. Étude sur le caractère surnaturel attribué à la puissance royale particulièrement en France et en Angleterre, Strasbourg, 1924, Rééd. Paris, 1983.

90 М. Блок, Короли - чудотворцы: Очерк представлений о сверхъестеств. характере королев. власти, распростран. преимущественно во Франции и в Англии, М.: Яз. рус. культуры 1988, с. 94.

91 Տե՛ս Ж. Ле Гофф, Предисловие, в книге: М. Блок Короли-чудотворцы ..., с. 31-32.

կով, ինչպիսին է Միջնադարը կամ Վաղ նոր դարը, այլ ընդգրկել է ավելի մեծ պատմական տևողություն, որը հետագայում Ֆ. Բրոդելի կողմից զարգացվել է որպես «երկար տևողություն» հասկացություն⁹²: **Երկրորդ**, խոշոր ներդրում էր «ընկերային հոգեբանության» պատմական աղերսի ուսումնասիրությունը, որն իր արտածական (դեղուկտիվ) ներգործությամբ ունակ է վերափոխելու հասարակական կյանքի շատ տիրույթներ՝ սկսած տնտեսությունից ու քաղաքականությունից մինչև կրոն և մշակույթ: Եվ **երրորդ**, Մ. Բլոկը զարգացրել է «համադրական պատմության» ըմբռնումը⁹³ և «արքայական հրաշքի» առիթով բացել քաղաքակրթական խորքային իրողություններ: Մեկ այլ առանձնահատկություն ևս. մենագրությունում, ըստ էության, հաղթահարված է իրադարձային պատմությունը: Մեկնարկելով առանձին փաստերից ու իրադարձություններից՝ Մ. Բլոկը հանգել է սկզբնաղբյուրների համալիր քննության՝ վերհանելով դրանց «ընթերցման» նոր հնարավորությունները:

Պատմության բոլոր գործոնները փոխկապակցված են քաղաքակրթական ամբողջի մեջ: Ուստի պատահական չէր, որ Մ. Բլոկը միջնադարյան մտակեցվածքներից հետո «հանկարծ» անդրադարձավ Ֆրանսիայի տնտեսական պատմության հիմնախնդիրներին: Դրա արտահայտությունը դարձան նրա «**Ֆրանսիական ագրարային պատմության բնորոշ գծերը**»⁹⁴ և «**Ֆեոդալական հասարակությունը**»⁹⁵ մենագրությունները: Դրանց գիտախնդիրը ֆրանսիական ագրարային կառույցի և ֆեոդալական հասարակության պատմությունն է ժամանակի երկար տևողությունում (VIII-XIX դդ.): Որպեսզի ընդգծի Ֆրանսիայում կայացած ագրարային հարաբերությունների և ֆեոդալական հասարակության առանձնահատկությունները, Մ. Բլոկը ծավալուն համեմատություններ է անցկացնում Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի և Իսպանիայի ֆեոդալական հասարակությունների միջև: Նա իր ուշադրությունը սևեռում է ընկերային-տնտեսական և մշակութային գործընթացների խորքային շերտերի վրա:

Իր առջև դնելով հասարակական կառույցի բովանդակությունը հնարավորինս համապարփակ մեկնաբանելու հիմնախնդիրը, Մ. Բլոկը հանգում է այն գաղափարին, որ բավական չէ միայն սկզբնաղբյուրների իմացությունը: Հասարակական կառույցի խորքային կողմերը բացահայտելու համար հարկ է փաստերը դիտարկել ամբողջական համակարգերի, հասարակական այլ զուգակցությունների համատեքստում, որոնցում ներառված են դրանք և որոնցով իմաստավորվում են: Այս կերպ, ըստ Մ. Բլոկի՝ «Եվրոպական ֆեոդալիզմն իրեն բնորոշ հաստատություններով արխայիկ վերապրուկների միահյուսումը չէ, այլ բոլորովին նոր հասարակական կառույց»⁹⁶: Երևույթի նման խնդրարկումը պայմանավորված է նրանով, որ հետագոտողն իր ուշադրությունը պետք է սևեռի ոչ թե «կյանքից կտրված» տեսություններին, այլ «մտքերի և զգացմունքների ուղղվածությանը, որոնց ազդեցությունը հասարակական պատկերացումների վրա, ըստ էության, եղել է ավելի նշանակալի»⁹⁷: Հասարակական կառույցների, ագրարային հարաբերությունների, ծեսերի և արարողակարգերի վերլուծությունը, որոնցով

92 Там же, с. 25.

93 Տե՛ս P. Burke, op.cit., p. 19-20.

94 M. Bloch, Les Caractères originaux de l'histoire rurale française, Paris, 1931, Rééd. 1952.

95 M. Bloch, La Société féodale, Paris, Vol. I-II, 1939-1940.

96 Ibid., p. 117.

97 Ibid., p. 130.

հագեցած էր միջնադարյան համակեցությունը, Մ. Բլոկին թույլ է տալիս կատարել ֆեոդալիզմի «կենդանի իրականության» հետազոտումը՝ քաղաքակրթական խորությամբ:

Լ. Ֆեբրի և Մ. Բլոկի այս հետազոտությունները, չնայած շեշտադրումների որոշակի տարբերությանը, անտարակույս փոխլրացնում էին միմյանց: Դա երևում էր, մասնավորապես, հանդեսում հրատարակված նրանց հոդվածներում: Սակայն փոխլրացումն առավել ցցուն էր նրանց տեսական-ընդհանրացնող աշխատություններում: Նկատի ունենք Լ. Ֆեբրի «**Մարտեր պատմության համար**»⁹⁸ և Մ. Բլոկի «**Պատմության ապոլոգիան կամ պատմաբանի արհեստը**»⁹⁹ մենագրությունները:

Ինչպես նշել ենք, երկուսն էլ մեկնարկում էին Անրի Բեռի մարդաբանությունից: Նրանց համար պատմության հիմնարար չափումը մարդն էր՝ իրեն շրջապատող աշխարհագրական և ընկերային միջավայրի հետ ունեցած փոխհարաբերության ողջ բարդությամբ: Համաձայն Լ. Ֆեբրի՝ «Պատմության չափորոշիչը մարդն է: Ավելին՝ պատմությունը նրա գոյության արտահայտումն է»¹⁰⁰: Շարունակելով այս միտքը՝ նա մասնավորեցնում էր. «Ոչ թե ուղղակի մարդը, այլ մարդկային հասարակությունները, կազմակերպված հասարակական խմբերը»¹⁰¹: Լ. Ֆեբրը և Մ. Բլոկը փորձում էին մարդուն դուրս բերել մեկուսացվածությունից, քանզի «Մեկուսացված մարդը վերացականություն է, իսկ իրականությունը մարդն է սոցիալական խմբի կազմում»¹⁰²: Այստեղից էլ՝ «Պատմությունը գիտություն է մարդու մասին, մարդկային անցյալի մասին, այլ ոչ թե առարկաների կամ գաղափարների մասին»¹⁰³ ըմբռնումը: Ուստի մարդուն ընկալելով իբրև պատմական ճանաչման առանցք, պատմագետը չպետք է նրան տարանջատի իր կեցության իրական պայմաններից, կոնկրետ տեղից ու ժամանակից, այլ ուշադրությունը կենտրոնացնի ընկերային խմբերի ու նրանց միջև տեղի ունեցող փոխհարաբերությունների վրա¹⁰⁴: Թե՛ Լ. Ֆեբրի և թե՛ Մ. Բլոկի համար ընկերային խմբերն ու նրանց փոխհարաբերությունները պատմագիտական առումով մեկնարկային նշանակություն ունեն. «Մեր հետազոտության օբյեկտը՝ հանուր իրականության ինչ-որ բեկորը, մարդկային գործունեության մեկուսի կերպը չէ»¹⁰⁵:

Աննալների հիմնադիրները, ընթանալով «մարդուց առ հանրույթը» և «մարդկանց հարաբերումն միմյանց ու արտաքո միջավայրի հետ» հասկացություններից, հանգեցին հետազոտության հիմնախնդրի վերանայմանը: Ըստ նրանց՝ պատմագետի հետազոտության առարկան **պատմություն-խնդիրն է (histoire-problème)**: Պատմագիտական յուրաքանչյուր աշխատության կարևորությունը որոշարկվում է նրա առաջադրած հարցերի կարևորմամբ: Դրանք ձևակերպում է պատմագետը՝ լծվելով ստեղծագործական աշխատանքի¹⁰⁶: «Հետազոտության իսկական նախապայմանը նրա խնդիրն է», - գրում էր Լ. Ֆեբրը¹⁰⁷: Մ. Բլոկն իր հերթին հավելում էր. «Փաստերի հետազոտման մեջ որքանով խնդիրները տիրա-

98 L. Febvre, *Combats pour l'histoire. Bibliographie choisée et méthodique*, Paris, 1953.

99 M. Bloch, *Apologie pour l'histoire ou métier d'historien*, Paris, 1993

100 L. Febvre, *Combats pour l'histoire ...*, p. 103.

101 L. Febvre, *La Terre et l'évolution humaine ...*, p. 428.

102 L. Febvre, *Combats pour l'histoire ...*, p. 15.

103 *Ibid.*, p. 12.

104 Տե՛ս M. Bloch, *Apologie pour l'histoire...*, p. 21.

105 L. Febvre, *Combats pour l'histoire ...*, p. 21.

106 *Ibid.*, p. 356.

107 Տե՛ս L. Febvre, *La France physique : question de méthode // Annales: ESC*, N 1, (1943), p. 93.

պետող լինեն, այնքանով մեր հետազոտությունն ավելի է մոտենում այն բանին, ինչը ընկերային գիտությունների մեջ հանդիսանում է պատմության իրական խնդիրը»¹⁰⁸: Միով բանիվ՝ պատմագետը ձևակերպում է իր հետազոտական խնդիրը և ըստ այդմ էլ ընտրում այն հուշարձանները, տեղեկություններն ու փաստերը, որոնց վերլուծությունը կարող է լույս սփռել դրա վրա: Հարցադրող-հետազոտողը չի բավարարվում փաստի ուղղակի մեջբերումով, այլ փնտրում է այն, ինչը փաստից անդին է՝ փորձելով հասկանալ երևույթների ներքին կապերը¹⁰⁹: Ուստի պատմագետը պետք է «սովորի» հարցեր տալ: Հարցադրումը, եթե այն արհեստավարժ-տեղին է կազմակերպված, «փաստերի մշակման համար ձգող մագնիս է», քանզի առանձնակի շեշտադրումով միտված է դեպի ինքնաճանաչում. «Հարկ է ստիպել համր իրերին խոսել, որպեսզի նրանք պատմեն իրենց և իրենց ստեղծողների մասին այն, ինչը նրանք չեն ցանկանում ասել»¹¹⁰:

Լ. Ֆերն ու Մ. Բլոկը հակված չէին պատմագետի մեջ տեսնելու դատավորի վերջինիս խնդիրն է ոչ թե վճիռներ կայացնել, այլ հասկանալ¹¹¹: Հակառակ դեպքում՝ «իրական մարդկային կյանքը կվերածվի սևուսպիտակ պատկերի»¹¹²: Պատմական ճանաչողությունն էլ ավելի ընդլայնելու համար անհրաժեշտ է առավել ակտիվ վերաբերմունք մշակել առ հուշարձանները, փաստերը. «Պատմաբանը փնտրում է պատճառահետևանքային ալիքների շղթան և չի վախենում նրանց բազմակիությունից, որովհետև այդպիսին է կյանքը»¹¹³: Ուստի՝ հետազոտությունն սկսվում է ոչ թե փաստերի հավաքմամբ, այլ հարցադրմամբ և հարցերի նախնական ցուցակագրմամբ, որոնք հետազոտողն ուզում է տալ սկզբնաղբյուրներին¹¹⁴:

Ուսումնասիրողը պատմական խնդիրները ձևակերպում է՝ ելնելով արդիականությունից: Ներկայի մեջ անցյալի նման ներբերումը իրականացվում է հարցուպատասխանային մեթոդով՝ անցյալին առաջադրելով հարցեր, որոնք արդիական են: Ուստի. «Անմիջական փաստաթղթային հետազոտությունը կարող է զրկվել ամենայն գիտական հետաքրքրությունից, եթե այն պատասխանում է լոկ այնպիսի հարցերի, որոնք արդիական չեն»¹¹⁵: **Լ. Ֆերն ու Մ. Բլոկը նշում էին, որ անցյալի պատմությունը չպետք է տարանջատվի արդիականությունից, քանի որ արդիականությունն ի գործ է պատմագետի առջև բացելու անցյալի հեռանկարն իր ողջ խորությամբ ու ընդգրկմամբ: Չևակերպելով իր խնդիրը և մեկնարկելով դրանից պատմագետը պետք է գույշ լինի, որ արդիականությունն «իր տակ չճգմի» անցյալը: Անցյալի մարդուն հարց ուղղող պատմագետը երբեք չպետք է նրան պատասխաններ պարտադրի, այլ պետք է ականջալուր լինի նրա ձայնին ու փորձի վերակառուցել նրա անցյալն ու հոգևոր աշխարհը: Պատմության հետազոտությունը և ընդհանրապես՝ պատմությունը արդիականության և անցյալի հարատև երկխոսությունն է¹¹⁶:**

108 M. Bloch, Leçon inaugurale de M. M. Postan // Annales: ESC, N 1, (1940), p. 161.

109 Տե՛ս Լ. Febvre, Un destin ..., p. 104.

110 L. Febvre, Combats pour l'histoire ..., p. 428.

111 Տե՛ս Լ. Февр, указ. соч., с. 73.

112 M. Bloch, Apologie pour l'histoire..., p.157.

113 Ibid., p.188.

114 Տե՛ս А. Я. Гуревич, Марк Блок и «Апология истории, // в книге: М. Блок, Апология истории, или Ремесло историка, М., «Наука», 1986., с. 204.

115 А. Про, Двенадцать уроков по истории, М., 2000, с. 87.

116 Տե՛ս А. Я. Гуревич, Жак Ле Гофф и «Новая историческая история наука» во Франции, // в книге: Ж. Ле Гофф, Цивилизация средневекового Запада, Пер. с фр./ Общ. ред. В. А. Бабинцева, Послесл. А. Я. Гуревича.—Екатеринбург: У-Фактория, 2005, с. 533.

Այս իմաստով՝ պատմության հետազոտության ուղին ոչ թե միակողմանիորեն գնում է անցյալից ներկա, այլ նաև ներկայից անցյալ՝ հետադարձ կապի ակտիվացմամբ, ուր և կարևորվում է հետազոտողի **ստեղծագործական ակտիվությունը**:

XIX դարավերջի նշանավոր պատմագետ **Ֆ. Գը Կուլանժը** պնդում էր, որ «սկզբնաղբյուրներն են արարում պատմությունը»: Դրան դեմ չէր Լ. Ֆերը, բայց ի հավելումն՝ նա շեշտադրում էր, որ «սկզբնաղբյուրների հիմամբ գրված պատմությունը, այդուամենայնիվ, գրել է կենդանի մարդը»¹¹⁷: Եվ քանի որ պատմությունը գրվում է կոնկրետ ժամանակաշրջանում, ժամանակի որոշակի համակարգի մեջ, ապա անցյալի, ներկայի և ապագայի միջև հնարավոր երկխոսությունը պատմագետի մտահոգևոր տիրույթում է կայանում: Այդ առումով՝ պատմագետի մտահոգևոր տարածքը տեղեկատվական-հաղորդակցական միջավայր է, որը ենթադրում է զանազան արժեքների, հասկացությունների, կրթանքների երկխոսային համահարաբերակցություն: Որքան պատմագետի մտահոգևոր տարածքը բովանդակալից է, այնքան նրա ստեղծագործությունը բազմաչափ ու բովանդակալից է: «Ըստ էության,- գրում է Լ. Ֆերը,- պատմությունը, նախ և առաջ, ընտրություն է. բայց ոչ ինքնակամ, այլ կանխամտածված»¹¹⁸: Նման բանական ընտրությամբ պատմագետը ձգտում է «կազմակերպել անցյալը, պարզություն և կազմակերպվածություն հաղորդել նրա անընդհատ պեկոծվող խորքերին, փաստերի անկարգ փայլատակումներին և շրջապատյուններին, որոնք չպատկանելով որևէ տեսանելի սկզբունքի, գալարվում են՝ բախվելով և միավորվելով, յուրաքանչյուր մարդու շուրջ նրա կյանքի յուրաքանչյուր ակնթարթին, ասել է թե՛ նաև հանրույթի կեցության ամեն մի ակնթարթի, որին նա պատկանում է»¹¹⁹: Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ պատմագետի անձը և ստեղծագործական ակտիվությունը ձեռք են բերում առանցքային նշանակություն, քանի որ նրա «կերպարը և հետազոտական աշխատանքի ոճն ու մակարդակը տվյալ հանրույթի գիտամշակութային զարգացածության կարևորագույն չափորոշիչներն են»¹²⁰:

Այս կապակցությամբ աննալականների կողմից առաջ էր քաշվում պատմագետի գործունեության նոր ըմբռնում, որում կարևորվում էր նրա ինքնագիտակցության նոր կերպը՝ **գիտելիքի երկխոսային ինքնագիտակցությունը**: Պատմագետն այլևս «սկզբնաղբյուրների ստրուկը չէ», նա ցուցաբերում է ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական գործունեություն, չնռանալով, սակայն, որ «յուրաքանչյուր դարաշրջան ստեղծում է պատմական անցյալի սեփական պատկերը»¹²¹: Պատմագետի առջև ծառայած է բարդ խնդիր՝ փաստերի բազմազանությունից մշակել այնպիսի հետազոտական քայլեր, որպեսզի ուրվագծվի գիտախնդրի ճշգրիտ լուծման հեռանկարը:

Այս ամենի արդյունքում՝ հիմնադիր-ուսուցիչները հանգեցին **պատմական փաստի** ընդգրկուն ընկալմանը: Նրանք համոզված էին, որ «Փաստն այն մեխն է, ըստ որի շարակազմվում է պատմությունը: Բայց այդ մեխ-փաստերը դարբնում է պատմագետն ինքը»¹²²: Նրանք ընդդիմանում էին XIX դարի վերջի դրասպաշտա-

117 Լ. Febvre, Combats pour l'histoire ..., p. 3.

118 Լ. Գեբր, указ. соч., с. 69.

119 Ibid., с. 99.

120 Ա. Ստեփանյան, անդ, էջ 19:

121 Լ. Febvre, Le problem incroyance ..., p. 12.

122 Լ. Febvre, Combats pour l'histoire ..., p. 116.

կան պատմագիտության պատկերացումներին (Շ.-Վ. Լանգլուա և Շ. Սենյոբու), որի համաձայն՝ «Պատմությունը գրվում է ըստ սկզբնաղբյուրների տառի»: Նման մոտեցմամբ պատմությունը կախված է պատմական վկայություններից. «Անդ, ուր լռում են սկզբնաղբյուրները, համր է և պատմությունը»¹²³: Ի պատասխան դրա՝ Լ. Ֆևրը շեշտում էր. «Պատմությունը գիտություն է մարդու մասին: Այն կիրարկում է **փաստերը**, բայց իբրև տեղեկություններ **մարդկային կեցության** մասին: Պատմագետի խնդիրն է փորձել հասկանալ մարդկանց՝ իբրև անցյալի իրադարձությունների վկաների»¹²⁴:

Պատմական փաստերի վերանայման այս մոտեցումը հնարավորություն էր տալիս անցյալի ուսումնասիրության համար օգտագործել նաև այն տեղեկությունները, որոնք նախկինում պատմական փաստեր չէին համարվում¹²⁵: Եվ պատմագետներն ավելի հաճախ սկսեցին ուշադրություն դարձնել պատմական անցյալի այն կառույցներին ու գործընթացներին, որոնք ժամանակի երկար տևողության մեջ մնացել էին «անփոփոխ» կամ «անշարժ»: Առաջին անգամ **«համր մեծամասնությունը» (mute majorité)**, տվյալ դեպքում՝ միջնադարյան հանրությից սկսեց խոսել սեփական լեզվով: Սա հիմնադիր-ուսուցիչների մեծագույն նվաճումներից էր: Գ-ն նաև հետազոտական նոր մեթոդի հաղթանակն էր:

Աննալականները մեծ ուշադրությամբ էին վերաբերվում պատմության **մեթոդաբանությանը**: Ընդ որում, հատուկ սևեռումի խնդիր էին դարձնում **հետադարձ և համադրական մեթոդներին**:

Ըստ Մ. Բլոկի՝ պատմական հետազոտությունը պետք է ընթանա **վերլուծությունից (analysis)** դեպի **համադրություն (syntèse)**, որն էլ պետք է լինի վերլուծության տրամաբանական շարունակությունն ու ավարտը¹²⁶: Համադրական մեթոդը համարելով առավել արգասավոր, նա իր «Հանուն եվրոպական հասարակության համադրական պատմության» հոդվածում ուրվագծել է դրա հիմնարար չափումները. «Համադրական մեթոդն ընդունում ենք լոկ այն ժամանակ, երբ երկու կամ ավելի համանման երևույթների էական գծերի կողքին կան և այլ գծեր: Դրանք կարող են գոյություն ունենալ ժամանակի ու տարածության մեջ»¹²⁷: Ուստի՝ հարկ է, որ նախ ուշադրություն դարձվի ժամանակի գործոնի նկատմամբ տվյալ փաստաթղթի առնչությանը, զի յուրաքանչյուր դարաշրջան ունի նյութական և գրավոր հուշարձանների (և փաստաթղթերի) իր յուրահատուկ ձևերը՝ արձանագրություններ, տեքստային պատումի տարասեռ դրսևորումներ: Համադրական մեթոդի օգնությամբ հնարավոր է վերականգնել երևույթների միջև եղած կապերը, նրանց բնորոշը, տիպականը: Բայց և, ինչպես նշում էր Մ. Բլոկը, պատմության մեջ համադրումը ծառայում է միաժամանակ թե՛ **տիպականացմանը**, թե՛ **անհատականացմանը**: Եվ դա ապահովում է հետազոտվող առարկայի առավելագույն ըմբռնումը¹²⁸: Այլ խոսքով՝ պատմությունը, լինելով հասարակական փոփոխությունների մասին գիտություն, գիտություն է նաև տարբերությունների մասին: Սակայն Մ. Բլոկն անհրաժեշտ էր համարում համադրել ոչ թե մեկուսի փաստերն ու

123 А. Я. Гуревич, Марк Блок и ..., с. 191.

124 Л. Февр, указ. соч., с. 69.

125 Sté O. M. Медушевская, Становление и развитие источниковедения, URL://http://avorhist.narod.ru/publish/istved1-2-8.html // 09.09.2007.

126 Sté M. Bloch, Apologie pour l'histoire..., p. 78 .

127 M. Bloch, Histoire et historiens, Paris, 1995, p. 95.

128 Sté A. Я. Гуревич, Марк Блок и ..., с. 200.

կառույցները (մնան մակերեսային որոնումը կարող է հանգեցնել և հանգեցնում է կեղծ ընդհանրացումների), այլ հենց ընկերային համակարգերն ամբողջությամբ: Ուստի, նրա կարծքով, պատմագետը պետք է ուշադրություն դարձնի ժամանակի հիմնախնդրին, քանզի անհնար է մտածել «մարդկայինի մասին, առանց ժամանակի»¹²⁹:

Պատմագետը կուտակված փոփոխությունները երևակելիս, որոշարկելիս և բացատրելիս կանգնած է **ժամանակի հասկացման** առջև: Ժամանակային ռիթմերն էական նշանակություն ունեն պատմության ցանկացած դարաշրջանի ըմբռնման համար: Բարդությունն այն է, որ «Մարդկային ժամանակը մշտապես դիմադրում է ինչպես իր միատարրությանը, այնպես էլ խիստ բաժանվածությանը: Նրան անհրաժեշտ են չափումի միասնական՝ սեփական ռիթմերի հետ համաձայնեցված և որոշարկված այնպիսի սահմաններ, որոնք հաճախ սահմանային գոտիներ են»¹³⁰: Չարգացնելով Ա. Ֆոսիյոնի միտքը, թե միևնույն ժամանակաշրջանում հավասար մակարդակի վրա չեն կարող գտնվել քաղաքականությունը, տնտեսությունն ու արվեստը, Մ. Բլոխը հավելում էր. «Հենց այդպիսի ոչ միօրինակության շնորհիվ է և ստեղծվում ընկերային կյանքի ռիթմը՝ գրեթե միշտ անհավասարաչափ»¹³¹: Համաձայն նրա՝ պատմական ժամանակը, մի կողմից, յուրահատուկ պլազմա է, ուր լողում են երևույթները, մյուս կողմից՝ միջոց է, որով նրանք հասկանալի են դառնում: Դա անընդհատ մի տևողություն է, սակայն նրանում ևս առկա է փոփոխությունը. «Այս երկու հատկանիշների հակաթեզից ծագում են պատմահետազոտության մեծագույն խնդիրները»¹³²: Այդ առանցքի վրա էլ կազմավորվում է պատմության կառույցը, որը պետք է «վերլուծել հիմնաշենքի և վերնաշենքի մեռյալ հակադրությունից դուրս»¹³³:

Այս ամենն առիթ էր տալիս Աննալների դպրոցի հիմնադիրներին հանգամանալից անդրադառնալու նաև «**մտակեցվածք**» (*mentalité*) հոգացքին, քանզի առանց դրա դժվար էր այս կամ այն դարաշրջանի, մարդկանց վարքի ու մտածողության ընկալումը:

Սա էլ իր հերթին հանգեցնում է պատմագիտության **հիմնախնդրի** ձևակերպմանը: Ի տարբերություն բնական գիտությունների, նրա հետազոտության առարկան «իմաստների որոնումն է»՝ «տարտամ անցյալականության մեջ», նպատակ ունենալով այն կառուցակազմելու իբրև «բանական ըմբռնելի անցյալ», որին ներհատուկ է պատճառահետևանքային հատուկ առանցք¹³⁴: Այս նպատակին հետամուտ՝ աննալականները մեկնարկում էին «մտակեցվածք» հասկացությունից՝ դրա տակ հասկանալով ինչպես պատմության դերակատարների, այնպես էլ պատմությունը գրառողների (պատմագետ) ներաշխարհը: Այն հետագա մշակման է ենթարկվել աննալական սերունդների կողմից և այսօր առանցքային կարևորություն է ստացել:

Պատմագետները նախկինում մեկնարկում էին այն ըմբռնումից, թե մարդը բոլոր ժամանակներում զգում և մտածում է միակերպ և, ըստ այդմ էլ, բավարարվում էին «առողջ դատողությամբ»: Դա, ըստ էության, դիմազրկում էր թե՛ անցյալը, թե՛

129 M. Bloch, Histoire et historiens, p.24.

130 M. Bloch, Apologie pour l'histoire ..., p. 185.

131 Ibid., p. 165.

132 Ibid., p. 86.

133 Ж. Ле Гофф, С небес на землю. // Одиссей. Человек в истории, М., 1991, с. 28.

134 Տե՛ս Ա. Ստեփանյան, անդ, էջ 10:

ներկան, և նրանց «երկխոսությունը» պատմագետի գրչի տակ դառնում էր սխեմատիկ ու միագիծ: Սակայն տարբեր դարաշրջանների և քաղաքակրթությունների համադրման արդյունքում պարզ դարձավ, որ մարդու աշխարհատեսությունը նույնական չէ, որ այն փոփոխվում է ըստ մշակութային պատկանելության և ընկերային միջոցների: Այլ խոսքով՝ մարդկային գիտակցությունը պատմական է¹³⁵:

Այս իմաստով՝ հետազոտողի ուշադրությունը կենտրոնանում է մարդկանց «հոգևոր կառույցի», «մտակեցվածքի» բացահայտման վրա: Հիմնադիր-ուսուցիչները ազգաբաններից փոխառելով այս հղացքը՝ այն կիրառեցին առավել բարդ և զարգացած հասարակությունների հետազոտման նպատակով¹³⁶: Նրանց համար դա կարևոր մեթոդաբանական նշանակություն ուներ. անցյալի եղելությունների «արտաքին» նկարագրությունից բացի, այժմ հնարավոր էր դառնում ներթափանցել դրանց «ներքին» տարածքները, մարդկային անհատականությունների ընկերային, բանական և հոգեբանական աշխարհները: Պատմության «օբյեկտիվ» կերպին (արդի գիտությունների կողմից կիրարկվող հղացք) հավելվում էր նաև անցյալի մարդկանց ներաշխարհի «սուբյեկտիվ» ընկալումը:

Անցած դարաշրջաններին ներհատուկ մտակեցվածքների հետազոտության ժամանակ պատմագետը ձեռք է բերում պատմական եղելության երկակի ընկալում. «Խնդիրն այն է, թե ինչպես պետք է ներդաշնակել երկու մոտեցումները՝ «ներքին» և «արտաքին», որպեսզի պատմական անցյալն առավել հստակ և ճշմարտացի ներկայանա»¹³⁷: Ուստի պատմության վերացական գաղափարներին աննալականները հակադրում էին մարդկանց վարքի և պահվածքի կոնկրետ կերպերը՝ ներմուծելով դրանց ընկերային կյանքի այն համատեքստը, որի պայմաններում նրանք ծագել են: Բացի մարդուց և սոցիալական խմբերից, Աննալների հիմնադիրները պատմություն ներբերեցին հասարակական կյանքն ամբողջությամբ՝ նրա փոխհարաբերությունների ողջ ներկայակնով:

Որոշարկվեց պատմագիտության **հիմնախնդիրը**. «Մեկնարկել այն ամենից, ինչը պատկանելով մարդուն՝ կախված է նրանից, ծառայում է նրան, արտահայտում է նրան, վկայում է նրա ներկայության, գործունեության, ճաշակի և գոյության ունակության մասին»¹³⁸: Այլ խոսքով՝ պատմության գլխավոր բաղադրիչները արտածվեցին «մարդու հասարակական կառույցից»՝ նյութական կյանքի պայմաններ, տնտեսություն, ընկերային կառույցներ, հոգևոր կյանք և այլն: Այստեղից հետևություն՝ պատմությունն այն ժամանակ է դառնում գիտություն, երբ «քաղաքակրթությունը» (ինչպես և անհատը) ոչնչով չի հիշեցնում մեխանիկորեն դասավորված պասյանսի խաղաքարտեր. բեկորների իմացությունը երբեք չի տանի համընդհանուրի ճանաչման¹³⁹:

Այս լույսի ներքո ակնհայտ է դառնում **միջկրթանքային** (interdisciplinares) հետազոտության անհրաժեշտությունը: Այն ի գործ է ստեղծել «գիտելիքի մի նոր հարացույց», որը հնարավորություն է տալիս հաղթահարելու «փաստագրական պատմագիտության տաղտուկը՝ հնարավորինս տարբեր հումանիտար գիտությունների միջև առկա (շատ դեպքերում՝ պայմանական) սահմանները ստվերելու

135 Տե՛ս **Ա. Я. Гуревич**, Марк Блок и ..., с.117.
 136 Տե՛ս **Ա. Я. Гуревич**, Жак Ле Гофф и ..., с. 519.
 137 **Споры о главном**: Дискуссии о настоящем и будущем исторической науки вокруг школы «Анналов». - М.: Наука, 1993, с. 28.
 138 **L. Febvre**, La Terre et l'évolution humaine ..., p. 201.
 139 Տե՛ս **M. Bloch**, Apologie pour l'histoire..., p.166.

նպատակով»¹⁴⁰: Հիմնադիր-ուսուցիչները շատ լավ հասկանում էին, որ մարդկային համակեցությունն այնքան հարուստ է, որ պահանջում է զանազան մեկնաբանություններ, և որքան շատ մոտեցումներ կան, նույնքան և բազմակողմանի է պատմության պատկերը: Այս առնչությամբ նրանք կրկին իրենց անբավարարվածությունն էին արտահայտում ժամանակի պատմագիտության հանդեպ¹⁴¹:

Արդեն նշել ենք, որ ավանդական պատմագիտությունն ուղղորդվելով լոկ «իրադարձութենական պատմության» հղացքով՝ խուսափում էր լայն համադրությունից և առանձին իրադարձություններն ու խնդիրները տարանջատում էր պատմության համընդհանուր և խորքային շարժումից: Հետաքրքրվելով լոկ մեկուսի, անկրկնելի փաստերով, ավանդական պատմագիտությունն անկարող էր կազմավորել «**կենդանի պատմություն**» (histoire vivante): Վերջինիս տակ Լ. Ֆևրն ու Մ. Բլոկը հասկանում էին պատմության այնպիսի շարադրանք, որի ծիրում համադրվում են պատմական գործընթացի բոլոր կարևոր բաղադրիչները (առտնին կյանք, տնտեսություն, քաղաքական համակարգ, իրադարձություններ, մշակույթ, մտակեցվածք և այլն)՝ իրենց եզակիության և ընդհանրականության մեջ: Ուստի «կենդանի պատմություն» ստեղծելու համար անխուսափելի է համագործակցությունը աշխարհագրագետների, տնտեսագետների, ընկերաբանների (սոցիոլոգների), ազգաբանների, հոգեբանների, լեզվաբանների, արվեստաբանների և այլոց հետ: Այլևս անհնար է պատմությունը հետազոտել միայն մեկ դիտանկյունից:

Հասարակական կառույցն իր ամբողջականությամբ դարձավ աննալականների հետազոտությունների կարևորագույն մեկնակետերից մեկը: Այն հնարավորություն է տալիս պատմագետին մերկայացնելու պատմական գործընթացների խորքային կողմերը, հաղթահարելու փաստերի և իրադարձությունների «կարճաժամկետ», գրեթե ակնթարթային ներփակությունը¹⁴² և հետազոտության առարկան իրադարձություններից, պատմական դեմքերից տեղափոխելու «ընկերային և մարդկային ոլորտ»¹⁴³: «Նոր կապեր հաստատել մոտակա և հեռակա կրթանքների միջև, հետազոտության միևնույն օբյեկտի վրա կենտրոնացնել տարբեր գիտությունների համատեղ ջանքերը՝ ահա այն հիմնարար խնդիրը, որ կանգնած է պատմության առջև [...]: Խոսքը ոչ միայն հասկացությունների փոխառության մասին է (թեկուզ հաճախ հույժ անհրաժեշտ), այլև հետազոտության մեթոդների և ոգու»¹⁴⁴: Ֆ. Բրոդելի դիպուկ բնորոշմամբ՝ «Մ. Բլոկի և Լ. Ֆևրի ժամանակ պատմությունն ուզում էր տիրապետել մարդու մասին բոլոր գիտություններին և կիրարկել դրանք իր հետաքրքրությունների համար կամ, առնվազն, ներթափանցել նրանց մեջ և փոխհարստացնել իր հիմնախնդիրն ու թարմացնել իր մեթոդները»¹⁴⁵:

Հասարակության նկատմամբ համընդգրկուն և ամբողջական մոտեցումը (որպիսին առկա է աննալականների և հետագա սերունդների հայացքներում) հիմք դարձավ մեկ այլ պատմական հիմնախնդրի վերանայմանը: Այն միտված էր ճշգրտելու **պատմության տեղը** մարդու վերաբերյալ բոլոր մյուս գիտությունների համակարգում. հիմնադիրները համոզված էին, որ պատմագիտությունը կարող է

140 Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, անդ, էջ 33-34:

141 Стé А. Я. Гуревич, Марк Блок и..., с. 217.

142 Стé L. Febvre, Combats pour l'histoire ..., p. 96.

143 M. Bloch, Les caractères originaux ..., p. 7.

144 Л. Февр, указ. соч., с. 20.

145 F. Braudel, Les Annales ont trente ans (1929-1959) // **Annales**: ESC, N 1, (1959), p. 1-2.

ընդգրկել մարդկային կեցության հետազոտության տարբեր դիտանկյունները միայն այն դեպքում, եթե վճռի միջկրթանքային կապերի հիմնախնդիրը՝ համագործակցելով ընկերաբանության (սոցիոլոգիայի), տնտեսագիտության, լեզվաբանության, աշխարհագրության և այլ գիտությունների հետ¹⁴⁶: Մ. Բլոկը բազմիցս շեշտում էր, որ պատմագիտությունը գտնվում է կազմավորման ընթացքում և նրա առջև ծառայած է իր հետազոտական մեթոդների ստեղծման խնդիրը: Ըստ էության. «Պատմությունն այն ամենն է, ինչը վերաբերում է մարդուն, ավելի ճիշտ՝ մարդկանց»¹⁴⁷:

Պատմությունն «ամբողջական տեսնելու» ձգտումը, ինչպես անդրադարձանք վերը, աննալականներին հանգեցրեց «համընդգրկուն պատմության» հղացքին¹⁴⁸: Սակայն «**համընդգրկուն պատմություն**» ասելով՝ չպետք է հասկանալ միայն հանուր աշխարհը: Այն կարող է լինել նաև տեղային, սահմանափակված ժամանակային որոշակի հատվածով: Դա պատմություն է՝ դիտարկված հետազոտման տարաբնույթ չափույթներով և դիտանկյուններով: Ասել, թե՛ «Պատմությունն իր բնույթով ընկերային է», նշանակում է ընդունել, որ այն նախ և առաջ հասարակական գիտակցության պատմությունն է: Սակայն «համընդգրկուն պատմությունը» չի սպառվում միայն հասարակական խմբերի գործողություններով ու մտակցվածքով: Նրանում կարևոր տեղ ունեն նաև առանձին անհատների գործողությունները, գաղափարները և կամքը:

Մյուս կողմից՝ «համընդգրկուն պատմությունը» հրաժարվում է մարդկանց կյանքը բաժանել լոկ քաղաքական, տնտեսական, կրոնական կամ էլի ինչ-որ այլ խմբերի¹⁴⁹: Այն, ավելի շուտ, մարդկային համակեցության զանազան շերտերի (տնտեսական, ընկերային, քաղաքական և մշակութահոգեբանական) խաղարկում-համադրումն է: Այս իմաստով՝ հիմնադիր-ուսուցիչները ընդհուպ մոտեցել էին «քաղաքակրթություն» հղացքի ըմբռնմանը: Ըստ նրանց՝ համապատմական խոշոր տեղաշարժերը հնարավոր էր բացատրել և տիպականացնել ժամանակի առավել մեծ տևողության ծիրում: «Քաղաքակրթություն», ըստ Լ. Ֆերի, «նյութական և հոգևոր, բանական և կրոնական այն համահավասարակշիռ ուժն է, որը ներգործում է մարդկանց գիտակցության վրա ժամանակի տվյալ հատվածում, տվյալ տարածքում»¹⁵⁰: Այսու՝ «համընդգրկուն պատմության» և «քաղաքակրթության» հղացքները համահարաբերակցվում էին՝ չնույնանալով:

Ընդհանրացնենք: Աննալների դպրոցի ծագման և զարգացման գործընթացից պարզ է դառնում, որ XIX դարավերջի-XX դարասկզբի պատմագիտական մտքի ճգնաժամը խոր հիմքեր ուներ: Այն կանգնած էր պատմական անցյալի և ներկայի ուսումնասիրման նոր մեթոդների ձևավորման խնդրի առաջ: Չևսփոխվում էին մարդու և հանրույթի մասին այլ գիտությունների հետ պատմագիտության ունեցած փոխհարաբերությունները: Հաստատագրվում էր պատմության՝ որպես ինքնուրույն գիտության գոյության իրավունքը, բացահայտվում էր պատմության տեսության խոր տարբերությունը պատմության իմաստասիրությունից՝ իր հիմնախնդիրներով և հետազոտական մեթոդներով: Գիտության ճգնաժամը դառնում էր հաղթահարելի:

146 Տե՛ս Ю. Н. Афанасьев, Историзм против эклектики... , с. 49.

147 М. Bloch, Apologie pour l'histoire ..., p. 3.

148 К. А. Агирре Рохас, Критический подход к истории французских "Анналов", М., 2006, с. 87.

149 Տե՛ս А. Я. Гуревич, Жак Ле Гофф и ..., с. 522.

150 Л. Февр, указ. соч., с. 282.

Ի մի բերելով Աննալների դպրոցի հիմնադիր-ուսուցիչների ներդրումը պատմագիտության բնագավառում՝ հետազոտողները առանձնացնում են դրանցից հատկապես երեքը.

առաջին. նրանք ավանդական իրադարձութենական պատմությունը փոխարինեցին վերլուծական-համադրական պատմությամբ,

երկրորդ. քաղաքական պատմությանը հակադրեցին «մարդկանց համակեցական գործունեության» տարասեռ կողմերի հետազոտությունը,

երրորդ. պատմագիտություն ներբերեցին այլ կրթանքների (աշխարհագրություն, ընկերաբանություն, հոգեբանություն, իմաստասիրություն, տնտեսագիտություն, լեզվաբանություն, սոցիալական մարդաբանություն և այլն) հետազոտական մեթոդներն ու արդյունքները:

Այսպիսով՝ Աննալների դպրոցի հիմնադիր-ուսուցիչների պատմասիրական-պատմատեսական համակարգն իր «բանական հեղաբեկմամբ» դարձավ XX դարի պատմագիտության առաջատար ուղղություններից մեկը: Նրանց հաջողվեց աննախադեպ կերպով ընդլայնել պատմագիտության հետազոտության տարածքը: Եվ այս ամենը՝ շնորհիվ նոր մեթոդական մոտեցումների և սկզբնաղբյուրների նորովի ընթերցման:

Summary

THE HISTORIOGRAPHICAL SCHOOL OF THE ANNALES

The Theory of History L. Febvre and M. Bloch

Smbat Kh. Hovhannisyan

The achievements of the French Historical Movement (School) the “Annales” are obvious. The role of the founders, L. Febvre and M. Bloch, is significant in promoting the research area of the field. The borders of history and other social sciences have been extended, their interactions have been intensified. As a result, traditional (descriptive) history undertook a new mission of structuralizing the basic dimensions of historical time – the features of the past, present and future. Some scholars formulate this achievement as a “revolution in history.”

The crisis of traditional historiography had basic cases at the turn of the XIX-XX centuries. It faces the problem of devising new methods of research. In its turn the latter a necessity has a risen to change the borders of history and various fields of the humanities (sociology, social anthropology, politology, geography etc.). Due to this, history, on the one hand, has expended its area of scope, and innovated on the other its research facilities.